

391.71 J

t-85

...ранд имейте лучше бумажную закладку.

- 4) Не перелистывайте страниц грязными и мокрыми руками.
- 5) Если у вас имеется в доме заразная больная, то заявите об этом в библиотеку при возврате книги.

КОГДА КНИГА ВЗЯТА

10/11 197									
242									

БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в срок, чтобы и другие могли воспользоваться

==== ей. ====

№ 1

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԻՆ «Հ Ա Ս Կ Ե Ր» ԱՊՐԱԳԻՆ

30 MAY 2010
Центр Библиотека
19 NOV 2010
М. ЛЕНИНА
Հայաստանի Հանրապետություն

891.71 ը

№ 11.

Ի-85
սր

ԻՆՍՆՈՎԻՉ

~~13947~~

25

Ի-81

Ա Ի Օ Ե Ն Ց Ս Տ Ե Փ Ա Ն Ը

Պատմամբ

13947
Փոխադրել
Գրադարան-Ընթերցարան
Բ. Հ. ՄԱՐԴԱՍ. ԸՆԿ.
17. I. 1911
Библиот.-Читальн.
Бак. Арм.

Պ ե ռ ձ Պ ո ս Ե Կ ան ց

205



Центральная биб-ка им. Ленина
гор. Баку
ИНВЕНТАРИЗАЦИЯ 1936 г.
Թ Ի Ց Ի Ս Ն

ՀԷԼԵՏՐԱԿԱԳ ՏՈՒՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՅՈՒ ՊՈՒԹՅ. 7

1910

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԿ



1417
41

ԱՌՈՅՆՑ ԱՏԵՓԱՆԸ

Ա.

—Աւչիկ, Աւչիկ, ո՞ւր է Աւչիկը, Ֆելդֆերելը կանչում է,— ձայներ բարձրացան զօրանոցի բոլոր սենեակներում:

Այս ձայնի վրա տախտերի մէկից գլուխը վեր քաշեց մի լղար ու բարձրահասակ զինուոր: Նրա երեսը՝ ոնց որ ամպած երկինք. վիզը երկար, գլուխը փոքր, արիւնը ցամաքած մի մարդ էր նա, իսկ մանր ու մոխրագոյն աչքերի մէջ պարզ նկատուում էր մի խոր վիշտ:

Պէտք է ասած՝ որ նրա անունն Աւչիկ չէր, նրա անունն էր Աւօենց Ստեփան, բայց կարճ կտրելու համար՝ ընկերներից շատերը համառօտեցին Աւչիկ, ոմանք էլ ուղղակի Աւօե էին ձայն տալիս:

Աւօենցը մէր ձգեց իր համազգեստի բոլոր կոճակները և գիւղացու պէս՝ ոտքերն աջ ու ձախ տարուբերելով՝ գնաց Ֆելդֆերելի մօտ:

—Այ մարդ, քեզ էլ կասեն զինուոր: Թիւֆ,— բացականչեց Ֆելդֆերելը:

Աւօճանը ձայն չը հանեց. նրա համեստ աչքերը, կարծես, ասու՛մ էին՝ ինձ մի յանդիմանի, այլ խղճան, Մակար Սաւելիչ:

— Գնան, մտի՛ր կարցեր (արգելանոց),— հրամայեց Ֆելդֆերելը:

— Ինչի՛ համար, — ըթի տակին մըթմըթաց Աւօճանը:

— Նրա համար, որ դու դիվիզիայի մեծ աւտորի առաջին մեր ոտը *) ցեխը կոխեցիր: Ռօտի հրամանատարը մենակ մի օր մի գիշեր հրամայեց քեզ նստեցնել, իսկ ինձ որ մնար՝ ես մի ամիս քեզ կը փթացնէի, հետն էլ՝ կակուղ ճիւղոտով մէջքիդ կաշին կը պլոկէի:

Աւօճանը չը հաւատաց. նա փորձով գիտէր, որ Ֆելդֆերելի լեզուն է չար, թէ չէ սիրտը զինւորների համար միշտ ցաւում է:

Եւ Աւօճանը ետ շրջեց բանտը գնալու:

— Կանգ... կարցերը տեղից չի փախչում, — ասաւ Ֆելդֆերելը, — ես դեռ իմ ասելիքը չեմ վերջացրել, Աստծուն փառք, մեր ոտը քեզանից ազատում է: Հէնց որ բանտից դուրս կը գաս, գնան պորու չիկ Տրիգուբովի մօտ. դու պիտի նրա տանը դենչիկ (սպասաւոր) դառնաս:

Յանկարծ Աւօի թալկացած աչքերի մէջ մի տեսակ ուրախութեան նշոյլ փայլեց:

*) Դիվիզիա — մի քանի զօրազունը միացած, ոտը — մօտ 150 մարդ:

— Ճիշտ էք ասում, թէ կատակ էք անում, Մակար Սաւելիչ, — հարցրեց Աւօճանը:

— Այ դիմադրու՛խ, ես քո ընկերն եմ, որ հետդ կատակ անեմ, հրամանատարն ինչ հրամայել է՝ էն էլ ես քեզ ասում եմ:

— Շնորհակալ եմ, Մակար Սաւելիչ, բարեխօսելուդ համար:

Շնորհակալութեան խօսքերն Աւօճանի սրտի խորքիցն էին բղխում:

— Շնորհ... հա... կալ եմ, — ծաղրելով կըրկնեց Աւօճանը խօսքը Ֆելդֆերելը. — ամէն մէկն ամօթից գետինը կը մտնէր, եթէ իրան զինւորական շարքից դուրս շարտէին, իսկ դու ուրախ ես... Բաի ու անտաշ դիւղացի:

— Փնօք իմ Աստծուն, հօ էլ զինւորական վարժութիւններ չը պիտի անեմ:

— Թիւֆ... Բայց ի՛նչ եմ ասում, ում քնչ կը յարմարի, մէկը հրացանն է սիրում. միւսը կօշիկ սրբելը, Գնան:

Անասելի ուրախութիւնով լցւած Աւօճանը թողեց, գնաց դէպի իր տախտը:

— Բարև մնաք, ընկերներ, — վերարկուն թեւին ձգելով՝ աջ ու ձախ գլուխ տեաւ Աւօճանը, —

ինձ դենչիկի աստիճանի բարձրացրին:

Ընկերների քրքչոցին ու սրախօտութիւններին ականջ չը դնելով, Աւօճանը ուրս ի ուրախ գնաց արգելանոցը:

Յուսման ցոլ բառայի մի Բ. ոտայ ցոլ սոյ յն—
ըրբմօւմ ցոկոյցա՛ր— Եփմօւմ յոյսիս Ս

Աւօճանցն արգելանոցը, կամ ծակը մտաւ.

Նրա առաջը դրին աւազախառն սև հացի չորացած կտոր և մի ժանգոտած թիթեղի ամանով ջուր:

Աւօճանցը շատ գոհ էր: 24 ժամ բանտ նստելն ամենևին հոգը չէր. համեմատած նրա կեանքի ուրախալի փոփոխութեան հետ ի՞նչ նշանակութիւն ունէր իր համար չնչին անախորժութիւնը:

Բոլոր ընկերները թքում, նախատում էին Աւօճանցին, որ նա իրանց ոտի պատիւը մեծաւորի առաջ վայր ձգեց, և պիտի ասած՝ որ Աւօճանցն ինքն էլ զգում էր իր մեղաւորութիւնը, բայց ի՞նչ անէր. աչքերը տխուր տրտում ձգում էր ընկերների երեսին և մտքում ասում.— «Ի՞նչ պիտի արած՝ քանի որ ես էսպէս մի գոմէջ եմ լոյս աշխարհ եկել»:

Ծամծմեց Աւօճանցն աւազախառն սև հացի կտորը, ջուրն էլ վրայից ներս ածեց և մտածեց խոր քնի մէջ բանտը մոռանալ:

Առհասարակ, Աւօճանցը հէնց որ աչքերը փակում էր, իսկոյն ընում էր. բայց այս անգամ այդ բանն չյաջողեց:

Ախար, էսօր նրա զինւորական կեանքի վերջին օրն է... վաղը նա ղենշչիկ պիտի դառնայ... նա այլևս չի ապրելու զօրանոցում:

—Տեսնես՝ պօրուչիկ Տրեգուբովն ի՞նչպէս

մարդ է. երեսից խիստ է երևում: Բայց ո՞վ գիտի, կարելի է սիրտը բարի է... է՛հ, որքան կուզի, թող խիստ լինի... էլի նրա տանն էստեղից լաւ կը լինի...: Նրա մօտ իմ գործս տան ծառայութիւն պիտի լինի և ո՞չ թէ զինւորական վարժութիւն:

Աւօճանցը մտաբերեց իր հայրենի գիւղը: Ուր իր գիւղը, սւր այս Ռուսաստանի հեռաւոր նահանգի մի փոքրիկ զինւորական աւան... Մէկը ծաղկաւէտ Արագած սարի լանջին, միւսը աշխարհից կորած: Ա՛խ... հիմա ի՞նչ հրաշալի է իր ծնած տեղը, իր սառն ու անմահական աղբիւրով և մեծ աղբիւրի ակնից հեռու ընկած հարիւրաւոր մեծ ու փոքր աղբիւրակներով, որոնք բոլորը քիչ ցածուժը միանում են, Արագածի ստորտից բղխած ձիւնաջրից առաջացած վտակները մէջն առնում՝ կազմում են այն գետակը, որտեղ նա տարիներով ձկնորսութիւն է արել, համեղ կարմրախայտ ձկներ է որսացել:

Այս ամենը բանտի մթութեան մէջ ներկայացաւ Աւօճանցի երևակայութեան:

—Ախ ու վնիս...— խոր յոգւոց քաշեց Աւօճանցը,— ա՛յ սև օր... ի՞նչ կը լինէր՝ մեր այգիների նեղ ու քարքարուտ փողոցում ձիւնուց վէր ընկնէի՝ ոտս կոտրէր...

Այդ դառնակսկիծ թառանչով յիշեց Աւօճանցն իր ծննդավայրի այն փողոցը, որտեղից վերջին անգամ գնաց մօտակայ քաղաքը՝ զինւորութեան

վիճակ հանելու: Նրա աչքերն արտասուքի ծով էին դարձել, սրտի վրա հոգեմաշ թախիծը ծանրացել էր, բայց դեռ յոյսը իսպառ չէր կտրել... Վիճակ է, կարելի է դուրս չը գայ...

Մէկ էլ՝ այգիների մօտից անցնելիս՝ Աւօենցն աչքերն աջ ու ձախ դարձրեց և տեսաւ արևելքում՝ թարգմանիչ կոչւած սրբավայրի աւերակը, իսկ արևմտքում՝ սուրբ Գրիգորի հրաշագործ կիսաւեր վանքը, ուր տարեկան հարիւրաւոր կատաղած շանից վիրաւորւածներ, գլուխները խոտի կեմ (խոտից ոլորած պարան) փաթաթած, անխօս ուխտ են գալիս:

Երկու, համարեա հանգիստակաց սրբավայրերի դիմացը Աւօենցի ոտքերն իրանք իրանց կասկանգնեցին: Նա իջաւ ձիուց, սանձն իր ուղեկից մեծ եղբօրն յանձնեց և ամեն մի սրբի դիմաց երեք երեք ծունր կրկնեց, որ բարեխօս լինեն, իրան լաւ վիճակի արժանացնեն:

Այդ միևնոյն աղօթքը քաղաքում երեք օր շարունակ մինչև վիճակի օրը Աւօենցը կրկնում էր: Նոյն աղօթքը մըմնջալով ներս մտաւ նա վիճակահանութեան դահլիճը, որտեղ սեղանի շուրջը նստոտած էին պաշտօնատան անդամները:

— Ով սուրբ Գրիգոր, — ուղեցաւ մըմնջալ նորից Աւօենցը:

Բայց խօսքը կիսատ մնաց:

Մի խրոխտ ձայն իրան սթափեցրեց.

— Աւօենց Ստեփան...

Աւօենցը հոգեկան ուժը ժողոված՝ առաջ գնաց: Նորեկի անտաշ ու անճոռնի կերպարանքը և վայրենի հայեացքն ատենապետի ծաղրը շարժեց, բայց Աւօենցն ուշք էլ չըդարձրեց, նա մօտեցաւ և վստահաբար վիճակատուսը հանեց:

— Երրորդ...

Աւօենցը ոչինչ չըհասկացաւ, նա բացի հայերէնից և թուրքերէնից՝ ուրիշ լեզուից հասկացողութիւն չունէր, ուստի խրտնած եզան նման աչքերը չոեց մօտը կանգնած թարգմանի երեսին:

— Երրորդը դուրս եկար, — կարճ հասկացրեց նրան թարգմանը:

Երրորդը...

Այդ մի հատ խօսքը Աւօենցին ուշամոլոր արաւ. նրան թւաց, թէ ամբողջ դահլիճը խաւարեց:

Բժիշկներն սկսեցին ոտից գլուխ գննել նորակոչին:

— Ախ... ինչի՞ իմ բոլոր մատները կան և տեղն են, ինչի՞ մի աչքս կոյր, մի ոտքս կաղ չէ...

Բայց, ահա, մի յոյսի նշոյլ ծագեց Աւօենցի սրտում, երբ բժիշկներն իրան հարց ու փորձ արին և կասկածական աչքերով իր թոքերի վերաբերութեամբ միմեանց ակնարկներ արին: Նրանցից մէկը, մինչև անգամ, հայերէն հարցրեց իրան, թէ երբևիցէ արիւն հօ չի թքել:

—Ո՛հ,—կմկմաց Աւօենցը և զղջաց ուղիղ խօսելու համար:

—Իէհ, ոչինչ կուրծքդ բոլորովին առողջ է, — հաստատեց բժիշկը:

—Ընդունել,—կանչեց դահլիճում մի բարձր ձայն:

—Ընդունւած ես, — հասկացրեց թարգմանը:

Ինչպէս մուրճի հարւած իջաւ Աւօենցի գլխին թարգմանչի բացատրութիւնը:

Նա ինքն էլ չիմացաւ, թէ ո՞ր առաջ արած տարան իրան՝ մի քանի նորակոչների հետ: Նրա ոտքերը թոյլ, տատանելով գնում էր: Նրա հետ եղողներից ոչ մէկը գոհ չէր, բայց ինչ որ Աւօենցն էր, նա կարծում էր, թէ ինքն արդէն մեռել էր:

Այս բոլոր յիշողութիւններն իրար խառնւած՝ կենդանանում էին Աւօենցի երևակայութեան մէջ մութ արգելանոցի խորքում:

Գ.

Եւ յիշեց Ստեփանը զինւորավարժութեան առաջին օրը. կարծես, նոր նոր էր ոտքը դնում զօրանոցի բակը:

Պատի երկայնութեամբ կարգով շարել էին նորակոչներին. Աւօենցը որովհետև ամենից բարձրահասակն էր, զօրքի աջակողմեան թեի վրա էր կանգնեցրած:

Տասնապետ Կուցինը շարքը հասակների բարձրութեան համեմատ դասաւորելուց յետոյ՝ մի քանի քայլ ետ գնաց, աչքի չափով տնտղեց դիժը և գոչեց.

— Հաանն... դաաւրտ:

Աւօենցը գողգողաց, նա՛ վիզն ուղիղ ցըցած, վախովախելով՝ աչքը ձգեց տասնապետի երեսին:

Նորակոչները աջ ու ձախ էին նայում, մէկն էլ ձեռքը վեր քաշեց և, ինչպէս գիւղացոց սովորութիւնն է, սկսեց ծոծրակը քորել:

— Էսպէս էլ կուպիտ գիւղացիք, — բացականչեց տասնապետը:

— Լսեցէք, տղայք, ամենից առաջ՝ դուք պիտի իմանաք, թէ ի՞նչ կը նշանակի «հանդարտ»: Հէնց որ կը հրամայեն «հանդարտ», դուք պէտք է ուղիղ ձգւէք, թևերդ կախէք, թիկունքներդ տախտակ շինէք, զլուխներդ բարձր բռնէք և ուրախ ուրախ մտիկ տաք. էնպէս կարծեցէք, թէ մի մի բաժակ արաղ խմել էք, մի կտոր միս էլ վրէն կերել:

Այս խօսքի վրա մի ծաղրածու արհեստաւոր յանկարծ փոթկաց:

— Էս ի՞նչ է, չը համարձակւես շարքում կանգնած ժամանակ շարժել: Քիթդ մի սրբի, շունչ մի քաշի, չորացիր, մնա մեռելի պէս անշարժ... Իսկ եթէ մօտովդ մեծաւորն է անցկենում, աչքդ նրա վրայից չը հեռացնես, բար-

կացկոտ երեսով շարունակ նրան նայիր, էնպէս կարծիր, թէ մօտովդ անցկենողը մեր թշնամին է և դու ուզում ես նրան սպանել: Գազանի աչքով մտիկ տնւր, մեծաւորիդ աչքովը կէր և նա քեզ կը գովի. դու էլ քօ կողմից գոռօ՝ «պատրաստ եմ աշխատելու»: Բայց միք մոռանայ, հետն էլ՝ պէտք է ամենքին իրանց աստիճանի համեմատ կցէք՝ «ձերդ գերազանցութիւն», կամ «բարձր բարեծննդութիւն» և կամ պարզ «բարեծննդութիւն»: Ուրեմն, միք մոռանայ, տղայք, ինչ է նշանակում «հանդարտ»:

Եւ տասնապետը շունչը խօր ներս քաշեց և խռպոտ ձայնով կանչեց.

— Հանդարտ:

Աւօտնոյն աշխատելով լսած խրատները կատարել, ծաղրալի կերպով վիզը ցցեց և ուզելով գազանի կերպարանքով տասնապետին դուր գալ, դունչ ու պոռնգը ծռմռեց:

— Ա՛յ դու արջի քոթոթ, — գոչեց տասնապետը, և մօտ գնաց Աւօտնոյն ուղղելու:

— Էտ ինչի՞ ես ուխդ ծռմռում:

— Դուք հրամայեցիք, որ գազանի պէս մտիկ տամ:

— Մի՞թէ գազանն էտպէս կրնայի, դունչ ու մոռութը կը ծռմռոտի. քեզ եմ ասում. Դէհ, սովորիր՝ ինչպէս պիտի մտիկ տաս:

Տասնապետն աչքերը որսի շան պէս խլշացրեց և ասաւ.

— Այ էտպէս պիտի աչքդ մեծաւորիցը չը հեռացնես, երբ նա շարքի առաջով անց է կենում: — Տասնապետն աչքերը չռած՝ գլուխը ծանր ու հանդարտ կիսաբոլորակ դարձրեց:

— Ի՞նչ ես կուզդ դուրս ցցել, կարծես, լւացք սղողող կին լինես... Ուղիղ կանգնիր:

Տասնապետը տարաւ, բերեց ու բռնցքով Աւօտնոյն թիկունքին շխկացրեց, իբրև թէ, կամենում էր մէջքն ուղիղ բռնել տալ, բայց Աւօտնոյն դարձեալ ծռմռում էր, կամ մի ուսն էր վեր քաշում, կամ միւսը ցածացնում, կամ կողքն էր դուրս պրծացնում, կամ փորն էր ուռցնում և կամ գլուխն էր քաշ բռնում: Տասնապետը մի կողմից ուղղում էր, միւս կողմից վրան ճշում.

— Ա՛յ, սատանէն քեզ տանի, փորդ տուն քաշիր, ոտքերդ մի կտորատի, ձեռքերդ ցած թող:

Եւ տասնապետը Աւօտնոյն փորին էր շրջակացնում, մէջքին էր թրխկացնում, կողքերին էր դնգսում, թնն էր ձիգ տալիս, աջ ու ձախ էր թեթթում և գոռում ու գոռում.

— Էտ ինչ... դու ուրեմն լսելու միտք չունես, թէ առաջին օրից ծակը մտնելու փափագ ունես:

Բայց տասնապետը հէնց որ մտիկ էր տալիս Աւօտնոյն երեսին և դիտում էր աչքերի մէջ փայլող հոգեկան տանջանքն ու վիշտը, խղճում

էր նրան ու բարկութիւնից թքում: Վերջը որ ճար չեղաւ, ասաւ:

— Լաւ, մի քիչ հանգստացիր, մինչև ես ուրիշներին սովորցնեմ:

Աւօնցը հեռուումը կանգնել էր ու ինքն իրան մտմտում, թէ երբ պիտի այս տանջանքին վերջ լինի...

Բակի միւս պատի մօտ՝ նորակոչները պարապում էին մարմնամարզութեամբ: Լսում էր «մէկ—երկու, մէկ—երկու»: Եւ զինւորները բարձր ու ցած էին անում ձողերի ու պարանների վրա: Նրանցից մէկը շուլալեց ձողի ծայրը և այնտեղից գոչեց «ուռնան»:

— Մի՞թէ ինձ էլ պիտի ստիպեն բարձրանալու, — մտածում էր Աւօնցը:

Նրան թւում էր, թէ ձողիցը ցած կընկնի և ջարդ ու փշուր կըլինի: Վնասն ինչ, մահը նրա համար այնքան էլ սարսափելի չէր... Իհարկէ, մահը լաւ բան չէ բայց այս կար, որ այն աշխարհումը զինավարժութիւն չէր լինելու...

Երկու ժամ տեւեց զինավարժութիւնը. երկու ժամը երկու տարի թւաց Աւօնցին: Նա տխուր, տրտում իր դառը վիճակի վրա մտածելով՝ ներս գնաց զօրանոցը:

Գ.

Նորակոչները պայուսակներով ու հրացան-

ներով ամենօրեայ վարժութիւններից բաւականին ընտելացել էին զինւորական գործին: Նըրանք արդէն կարողանում էին ձեռքերը կողքերին ուղիղ կանգնել, «մեծաւորին աչքով կուտալ», «մէկ երկու... մէկ երկու» կրկնելով՝ կանոնաւոր քայլեր անել: Միայն Աւօնցն էր, որ ընկերներից ետ էր մնացել: Որքան նա աշխատում և ջանք էր անում, զինւորական կարգերն ու վարժութիւնը նրան չէին աջողում: Եւ որ գլխաւորն էր, էնպէս մի դէմք ու պատկեր ունէր, որ ամբողջ զինւորների շարքի վրա տխրութիւն էր բերում. ինչքան չարչարում էր, չէր կարողանում ուրախ մտիկ տալ, ոգևորել. չէր կարողանում, որովհետև լուսածագից մինչև երեկոյեան վերջալուսի խաւարելը՝ շարունակ մտատանջութեան մէջ էր, անդադար իր ծննդավայրի կարօտն էր քաշում, իր անցեալ կեանքն էր մտաբերում:

Սկզբներումը՝ թէպէտ միւս նորակոչներին էլ զօրանոցի կեանքն ու զինւորական ուսումը դուր չէր գալիս, բայց նրանք ամենքը շուտով ընտելացան, շատերը մինչև անգամ զինւորութեան մէջ մի տեսակ բաւականութիւն էին գգում, մէկ մէկի դէմ իրանց ճարպիկութիւններով և հրացանավարժութիւններով պարծենում էին և թմբուկի ձայնով ոգևորում էին: Իսկ Աւօնցին ոչ համազգեստն էր ուրախացնում, ոչ փայլուն կաշէ գօտին, ոչ արևի տակ ու-


կու պէս պսպղացող, աչք խտտղեցնող հրացանի սւինը: Ընդհակառակն՝ ամեն մի առարկայ, որ նրան զգալ էր տալիս, թէ ինքը զինւոր է, այն բոլորը նրան վշտացնում էր: Համազգեստը սեղմում էր նրա կոկորդը, չէր թողնում ազատ շունչ քաշելու, իսկ նրա միաքն ու հոգսն իր թողած պապական արխալուղն ու շալ չուխէն էին: Փողահարութիւնը Աւօենցին չէր ոգևորում, նա յիշում էր Արագածի հովիտներում ոչխարն արածացնող հովւի սրնգի անոյշ սուլոցը, և նրա սիրտը քիչ էր մնում տխրութիւնից տրաքւէր:

Անաշող էր գնում նոյնպէս Աւօենցի հրացանավարժութիւնը, կարծես օձ կամ կարիճ էր ձեռքին բռնում և ոչ հրացան: Պիտի ասած՝ որ նա երկիւղ չէր անում, թէ կարող էր հրացանը յանկարծ տրաքւել և իրան սպանել, բայց որ իրա համար հրացանը զգւելի բան էր:

— Հրացանը նւիրական մի սրբութիւն է զինւորի համար, — կրկնում էր անդադար տասնապետը. — հրացանը տրւած է զինւորին, որ գնդակախորով անի թշնամուն, սւինն էլ արբւած է՝ թշնամուն ծակձկելու համար:

Այդ բանը շատ լաւ գիտէր Աւօենցը, և հէնց այդ պատճառով էլ ատում էր հրացանը: Նա ամենևին գիտաւորութիւն չունէր սպանութիւն գործելու, բնականից՝ ինքը խաղաղասէր, մարդասէր, աշխատասէր էր: Մի անգամ՝ իրանց գիւ-

1417
111



ղում՝ հարեանի կինն Գինչքան աղաչեց պաղատեց, չը կարողացաւ Աւօենցին համոզել իր հաւը մորթելու: — Մի թուման տնտ, մորթ չեմ անի, — պնդում էր Աւօենցը: — Հաւ է, հօ մարդ չի, որ խղճում ես, — ասաւ հարեանի կինը:

Աւօենցը չէր էլ մտածում, թէ պատերազմում կը սպանւի, մահից երկիւղ չունէր, նա երկչոտ չէր, բայց որ ուրիշին սպանէր, հէնց ասենք թշնամուն՝... օօօ... Աստուած մի արասցէ...

— Ի՞նչ եմ ասել արտն ու գութանը, բանն ու այգին՝ ինչքան կուզես, վարիր, հողը շուռ է շուռ տուր, ցաւ հօ չի՞ զգալ: Եւ Աւօենցը շարունակ մտածում էր հող ու գութանի վրա և աւելի ու աւելի էր ատում հրացանը:

Իսկ այսպիսի մարդուն հիմա անգադար կրկնում էին: — Ա՛ջ՝ ծակիր — ձնի՛՝ ծակիր:

Ծիծաղելի էր, թէ ինչպէս էր Աւօենցն անտաշ ու անհոբհք կերպով հրացանը շարժում:

Պատժում էին Աւօենցին, օրերով հերթապահ էին նշանակում, ժամերով հրացանը ձեռքին անշարժ պահած՝ ոտքի վրա կանգնեցնում էին, չոր հացի կտորի և ժանգոտ ջրամանի յուսով շաքաթներով արգելանքով էին նստեցնում: Ենամ գուր:



Վերջապէս տասնապետն ու ֆելդֆեբելը համոզեցին, որ Աւօենցը ոչ թէ ծուլութիւն է անում, այլ որ զինւորական ծառայութիւնը նրա գլուխը չի մտնում՝ բանւորութիւն, մշակութիւն, ամենտեսակ ծանր աշխատանք նա սիրում և յօժարութեամբ կատարում էր, իսկ զինւորական ուսումի մէջ նա կատարեալ արջ էր, որին ստիպում են պար գալ:

Ե.

Չէր մոռանում Աւօենցն իրանց հարիւրապետի տառջին անգամ արած զինավարժութեան փորձը: Նորակոչներին շարքով դասաւորեցին և ֆելդֆեբելը մի քանի անգամ կրկնեց, թէ ինչպէս պիտի մեծաւորին հանդիպեն:

Կէս ժամից՝ զօրանոցի դրան ետևից երևաց իրանց հարիւրապետ կապիտանը: Նա նկատեց, որ Աւօենցը հրացանը կանոնաւոր չի բռնել: Իսկոյն մօտ վազեց և ուղղեց: Կապիտանը, որ մի սուրթ էր պտուտում պակասութիւն գտնելու և բարկանալու, կանգնեց Աւօենցի առաջին և խրոպոտ ձայնով գոչեց.

— Ապրիս, երեսդ պարզ. սով է քեզ սովորեցրել:

Նա կանչեց. — «Տւր է սրա տասնապետը»:

Տասնապետ Կուցինը հրացանն ուսին դուրս եկաւ, շարքից և սառած կանգնեց:

— Այս ինչպէս ես սրան վարժեցրել: Քիթ ու մոռթը արորէլ ես:

— Հրամանք ես, ձերդ բարեծննդութիւն, բայց դա շատ անտաշ ու անշնորհքն է, ուրիշների պէս չէ:

— Գատարկ խօսքեր: Առաւօտից մինչև երեկոյ վարժեցրու, որ զինւոր լինի, ոչ թէ արագիլ... թէ չէ...

— Հրամանք ես, ձերդ բարեծննդութիւն:

— Դու էլ նայիր, — դարձաւ կապիտանը ֆելդֆեբելին:

Զինահանդէսից յետոյ՝ տասնապետն ու ֆելդֆեբելը սկսեցին անարդել ու հայհոյել Աւօենցին:

— Անբան անասուն, քո պատճառով մեծաւորից մեզ էլ է հոսնում, — ասաւ ֆելդֆեբելը:

— Մէկ որ դունչ ու պուճուղդ արենշաղախ կանեմ ու ատամներդ փշրտեմ, այն ժամանակ կարելի է սովորես, — կրկնեց տասնապետը:

Աւօենցը պապանձեւել, մնացել էր, դեղնել, սփրթնել էր, կատարեալ հիւանդի էր նմանում, քիչ էր մնում՝ աչքերիցը արտասուք կաթէր:

Նա վարժեցնում էին ֆելդֆեբելն էլ, տասնապետն էլ, անդադար, թէ առանձին և թէ ընկերների հետ:

Աւօենցն աշխատում էր, որքան ուժ ունէր, ինչպէս ասում են, հոգին դուրս է գալիս, ուզում էր սովորել և շատ էր ցաւում, որ իր պատ-

ճառով հարիւրապետը շարունակ հայհոյում էր
Ֆելիքեբելին և տասնապետին: Նետկանքն այն եղաւ, որ Աւօհնցը՝ քիչ ու
շատ առաջադիմութիւն արաւ, բայց տասնա-
պետն իր կողմից ասաւ Ֆելիքեբելին, թէ Աւօ-
յենցն երբէք լաւ զինուոր չի դառնայ. եւ ուղիղ էր:

Նայրենի զիւղի կարօտը, ամենօրեայ վար-
ժութիւնները այնպէս էին ազդել Աւօհնցի վրա
և ձանձրացրել, որ շատ անգամ նա մտքով անց
էր կացնում, թէ մի զիշեր, երբ բոլորը խոր քուն
մտնեն, ինքը վեր կենայ ու ատելի հրացանն իր
սրտումը դատարկի:

Այս մահաճրակէր միտքը շատ անգամ էր
նրա երևակայութեան մէջ արծարծուել: —

Այսպէս, թէ այնպէս՝ մօտ էր այն օրը, երբ
դիվիզիայի մեծաւորը պիտի գար և անձամբ
վերահասու լինէր իւր ստորադրեալ զնդերի վար-
ժութեանը:

— Աստուած չանի, որ դու մեր ոտը խայ-
տարակես, — ասաւ Աւօհնցին Ֆելիքեբելը:

Իհնչպէս կարելի է, Մակար Սուելիչ, —
պատասխանեց Աւօհնցը:

Գիվիզիայի մեծաւորի վերահասութիւնն ու
քննութիւն փայլուն էր անցնում:

Եւ ահա, սկսեց ամեն զօրահանդէսի անար-
տական գործողութիւնը — որ էր՝ հանդիպաւոր
քայլաձգքը:

— Յիսնեակ, յիսնեակ, քայլեցէք, ձայն տը-
լաւ գնդապետը:

Նւազածունները բռնեցին իրանց տեղերը:

Առաջին ոտի հարիւրապետը դուրս եկաւ շար-
քի առաջ և հրամայեց. «Յամրաւքայլ . . .
ասառնաջ . . .»: Փողհարները փչեցին, երաժշտա-
կան խումբը նւագեց քայլերգը:

Սմեն ինչ ընթանում էր կանոնաւոր: Գե-
ներալը գովեց առաջին, երկրորդ և երրորդ ոտ-
ներին: Ահա, հասաւ չորրորդ ոտի հերթը, որի
մէջ Աւօհնցն էր: Ռօտը պատի նման ուղիղ ա-
ռաջ շարժեց իր կապիտանի ետևից:

— Մէկ-երկու . . . մէկ-երկու . . . աջ . . . ձախ . . .
աջ . . . ձախ . . . — շնջում էր իր մէջ Աւօհնցը, որպէս
զի ոտքերը չըշփոթի: Մի քանի քայլ էր մնացել
մինչև դիվիզիայի մեծաւորը:

Գեներալն այն է ուզում էր գոչել.

— «Ապրիք, տղայք», մէկ էլ՝ յանկարծ, աջ
թևի մօտ գիծը թեքեց: Աւօհնցը չափազանց
եռանդից և երկիւղից՝ չը կարողացաւ ուղիղ
գիծը պահել և ոտքը շփոթեց: Նա աշխատում
էր ոտքը կարգին դնել, բայց մէկ ետ էր մնում,
մէկ դուրս էր ընկնում շարքից և խանգարում
ընկերներին:

Գեներալն ինչ որ փնթփնթաց գնդապետի
ախանջում, վերջինս ետ շրջեց և մի բան քըչ-
փչաց գնդի ազիւտանտին: Սա ձեռքը զլխար-

կին գրաւ, դուրս եկաւ տեղից և ձին քշեց դէպի չորրորդ ոտար:

—Ոտքերը շփոթեցին, —ասաւ աղիւտանալ հարիւրապետին:

—Այդ ո՞ր անասունն էր, — դարձաւ կապիտանն իր զօրաշարքին:

—Աւօհնց էր, ձերդ բարեծննդութիւն, — պատասխանեց ֆելդֆեբելը:

Գեռ ոչինչ չէր պատասխանել հարիւրապետը, որ հրաման տրւեց. — «Շրջուեեցէք»:

Գունդը քայլեց ամփոփ խմբով:

Գեներալը գովեց գնդին, յետոյ դուրս կանչեց բոլոր հարիւրապետներին և շնորհակալութիւն յայտնեց: — «Առհասարակ, պարոններ, ես քաղցր սպաւորութեամբ եմ հեռանում ձեզանից»:

Ճաշի ժամանակ՝ զինուորներին տւին մի մի բաժակ օղի:

Այսպիսի աջող և փայլուն ելքից յետոյ, իհարկէ, մոռացւեց Աւօհնցի դէպքը...

Չը մոռացաւ միայն ֆելդֆեբելը: Որպէսզի միւս անգամ այսպիսի ամբախտութիւն չը պատահի, նա մտքումը դրաւ Աւօհնցին քշել կամ դէպի ախոռը ձիապանութեան և կամ դենշչիկ շինել:

Միւս օրը, ֆելդֆեբելի բախտից՝ պօրուչիկ Տրիգուբովը յայտարարութիւն տուաւ, որ իրան մի դենշչիկ նշանակեն:

— Գոյ՛ տա՛ իմ... Գ. Իրմու զմայմաՍ
ցեռոցան մանճ ամարոմի ճայլոյ ըն իցման

Պարզ առաւօտ էր, երբ Աւօհնցը արգելանոցից դուրս եկաւ: Նա շտապով գնաց և սկսեց կապօտել իր իրեղէնները: Մի ազատ շունչ քաշեց նա, ետ տւաւ իր հրացանն ու պայուսակը, ուրախ ուրախ դուրս եկաւ գօրանոցի դռնից և ջերմեռանդութեամբ երեսը խաչակնքեց:

Աւօհնցը գտաւ Տրիգուբովի բնակարանը, բարձրացաւ պատշգամբ ու ներս մտնելով սենեակը՝ դռան տակին կանգնեց: Հեշտաեռի մօտ նստած էր երեսուն տարեկան մի տիկին, մօտն էլ տասը տարեկան մի շիկահեր տղայ: Ելելան մեծ մեծ աչքերը անկեց Ստեփանի վրա:

— Կատարեա՛ւ կապիկ է... Ի՞նչ դենշչիկ, — ասաւ տիկինն ու ծիծաղեց:

— Մակար Սաւելիչը զրկեց, — վախվախելով ասաւ Ստեփանը:

— Ի՞նչ Մակար Սաւելիչ:

— Ֆելդֆեբելը:

— Յիմանր ֆելդֆեբել, — ճչաց տիկինը, — ինձ մօտ մեծ մեծ աղնւական հիւրեր են լինում... և յանկարծ, այսպիսի դենշչիկ...: Գնան, չեմ ուզում:

Ստեփանն այս բանը բոլորովին չէր սպասում. ինչպէս, նա նորից ետ դառնայ գօրանոց, նորից ուսում, նորից հրացանավարժութիւն, սուսերամարդութիւն...: Չէ, այդ անկարելի է...

Ստեփանը տեղից չըշարժեց, նա փորձանքի մէջ ընկած կենդանու նման՝ մտքումը դրաւ պաշտպանել՝ ինչպէս էլ լինի:

— Տիկին, ինձ դուրս միք անի, — խօսեց նա — խաչը վիւյ, ես ամեն տեսակ ծառայութիւն կանեմ ձեզ:

— Ի՞նչ ծառայութիւն պիտի անես, ինքդ հիւանդ:

— Ամենևին ոչ... կամենաք բժշկին հարցրէք:

— Ինչի՞ ես էտպէս դեղնած, տէ՛նդ ունես, ի՞նչ է:

— Ամենևին ոչ... Մօրուց էտպէս եմ... Փորձեցէք ինձ... ես ամեն բան կը սովորեմ... տիկին, աղաչում եմ, խղճացէք, ինձ միք դուրս անի:

Տիկինն ինչ որ մտմտաց:

— Շատ լաւ, — ասաւ նա, — կը փորձեմ, տեսնենք, ի՞նչ կարող ես շինել... Մի շաբաթ կաց... բայց մտքումդ պահիր, որ ծոյլերին ես չեմ սիրում. մի օր չեմ պահի:

Ստեփանը սիրտ առաւ. սարսափելի վտանգը մի շաբաթով իրանից հեռացաւ, և էտքան ժամանակում նա կարող էր տիկնոջը հաճոյանալ:

— Ինչ որ հրամայէք՝ բոլորը կը կատարեմ, — ուրախ ուրախ ասաւ Ստեփանը:

— Ինչպէս բոլորը... դենշիկն ամեն ինչ է՝

խոհարար, սպասաւոր, լւացարար, դայեակ, մի խօսքով՝ ամեն բան ձեռիցը պիտի դայ:

— Հրամանք ես, ես ամեն բան կը սովորեմ: — Մի տեսնենք... Իմ կարգ ու կանոնն է. ծառան նրա համար է, որ բան չիւնի և ոչ թէ պարապ սարապ քարշ դայ...

— Իսկ ինձ համար փոռան կը շինե՞ս, — հարց տաւ երեխան:

— Էնպէս փոռան շինեմ, որ եզան նման բռանաչի, — պատասխանեց երեխային Ստեփանն և զնաց խոհանոց:

Ստեփանի ուրախութեանը չափ չը կար. ոտից ազատելը, երեխայի քաղցը ձայնն ու պայծառ աչքերը նրան նոր կեանք տւին:

Տիկինը մտաւ խոհանոց: Ստեփանը ձգեց, պատիւ տաւ:

— Անուշագ ի՞նչ է:

— Ստեփան:

— Դէ՛հ, Ստեփան, վերցրու այս զամբիւղը, դնանք փողոց:

Ստեփանը գնում էր տիկնոջ ետևից և մըտածում՝ ի՞նչպէս անեմ, որ սրան հաճոյանամ:

Տիկինը գնեց միս և ուրիշ պաշարեղէն. մեծ զամբիւղը բերնէ բերան գլխեց. մի անագին դղում էլ վերևից բազմեց: Տիկինը հաշտեց, որ կարելի է ալիւր էլ առնել և մշակի չըտալ: Ստեփանը կարող էր մի ձեռքով զամբիւղը, միւսով ալիւրի տոպրակը տանել, կամ թէ շալակն առ-

նել: Եւ որովհետեւ Ստեփանն երեք ձեռք չունէր, տիկինն էլ ուրիշ ոչինչ չառաւ:

Տուն դարձան: Դեռ նոր բեռը ցած էր դրել Ստեփանը, որ դռան քամակից մի բարակ ճիչ լսեց:

— Ստեփան:

Տիկինն էր, նա առաւ Ստեփանին, մտաւ մութ մառանը և հրամայեց մի մեծ արկղի խուփը բարձրացնել: Կեղտոտ լացք էր բոլորը:

— Վերցրու այս ու տանք, լւս, — հրամայեց տիկինը, — սապոնը դարակի վրա է... լացատունը բախումն է...: Նայիր, լացքը մաքուր լինի... մի հատ չը կորչի... բոլորը գրած ունեմ:

Ստեփանը լացքը կապում և մտածում էր՝ արդեօք, կարո՞ղ եմ լւանալ ինչպէս հարկն է: Իսկ տիկինն իր հրամաններն էր շարունակում:

— Նայիր, որ լաւ ողողած լինի... սապոնի հոտ չը գայ...: Յետոյ պէտք է բոլորն արթուկես... տակի շրջագրեսներն օսլայես, որքան կարելի է՝ պինդ, որ շարժելուս խշխշան... չաւկացնիր:

— Հրամանք ես, — պատասխանեց Ստեփանը, բայց մեծ տխրութեամբ: Վերջին հրամանը նրան սաստիկ շփոթեց: Լացքը մի տեսակ գլուխ կը հանէր, զինուոր մտած օրից՝ իր փոխնորդներն ինքն էր լւանում. զօրանոցի գերձակների մօտ էլ տեսել էր, թէ նրանք ինչպէս էին արթուկում. այդքանը մի տեսակ ինքը կարող

էր կատարել, բայց շրջագրեսներն այնպէս արթուկէր, որ շխշխային, այդ բանը իր համար միանգամայն խելքից մտքից դուրս հանելուկ էր, բայց ճարն ի՞նչ. պէտք է միտեսակ հնարքը գլուխէր, թէ չէ նորից զինավարժութիւն, հրացան, զօրանոցի կարմիր պատեր...

Եւ Ստեփանը շիմացած՝ թէ ի՞նչպէս պիտի բոլորը կատարի, փոխնորդների անագին կապոցը շալակն առաւ և գնաց լացատունը: Բեռը շալակին ներս մտնելն ու ներսում եղած լացարար կանանց բարձր ծիծաղը մէկ եղաւ: Երեք կին այստեղ լացք էին անում: Նրանք գործերը թողին և սկսեցին մեր նոր լացարարին ծաղրել:

Ներս գալիս՝ Ստեփանը ուզեց ասել «բարի աջողում ձեզ». բայց հէնց որ լացարարների հոճոցը լսեց, ամօթից կուչ եկաւ, ձայնը կրտեց և տնտղում էր, թէ որտեղ իր համար լւանալու տեղ գտնէր:

— Ինչ կը լինի, պարոն ինձ համար ջրհորից ջուր բերէք, բոլորովին չեմ սիրում ջուր քաշելը, — ասաւ լացարարներից մէկը:

Ստեփանն երկու դոյլ վերցրեց և գնաց ջրհորից ջուր հանեց: Նա տեսաւ, թէ այն կանայքն ի՞նչպէս էին լւանում, ինքն էլ երեսին խաչ քաշեց և սկսեց: Լացարարներն անդադար ծիծաղում էին Ստեփանի վրա, նա ուշք չէր դարձնում. եռանդով սապնում էր, մզում և նորից

սապնում... Իսկ թէ ինչպէս պիտի շրջագ-
գեստներն օսլայէր ու արթուկէր: Ահա այդ
միտքն էր նրան շարունակ անհանգիստ անում:
Մի անգամ միայն Ստեփանը պատասխա-
նեց կանանց ծաղրին:

— Ի՞նչ էք ծիծաղում, այ կաշաղակներ, զին-
ւորին ինչ հրամայեն, պարտական է կատարել:
Այն կինը, որի համար Ստեփանը ջուր էր
բերել, վերջացրեց իր լւացքը ու տարաւ չար-
դախումը փռելու: Ստեփանը ետեւից վազեց:

— Լսեցէք, խնդրեմ, — ասաւ Ստեփանը, —
ես ձեզ համար ամեն ժամանակ ջուր կը քա-
շեմ... դուք ինձ սովորեցրէք շրջագգեստներ
արթուկելը...

Լւացարարը փռթկաց:

— Ձեզ համար ծիծաղելի է, բայց ինձ հա-
մար շատ վատ կը լինի, եթէ դուք ինձ չ'օգնէք,
— ասաւ Ստեփանը. շուտով իմ ամօսականս պի-
տի ստանամ, ձեզ կը հիւրասիրեմ... Օգնեցէք ինձ...

— Վաղն առաւօտ ես իմ տիկնոջ շրջա-
գգեստները պիտի արթուկեմ — ասաւ կինը: — Ա-
րի մօտս, ես բոլորը ցոյց կը տամ:

— Ասաւ ձեզ կեանք տայ, — ասաւ Ստե-
փանը: Նրա յոյսը հաստատ էր, որ ամեն բան
լաւ կերթայ: Գլուխը կախ՝ գործում էր նա և չը
նկատեց, թէ ինչպէս դուռը ճռնաց և երևաց
խարտեաշ ու սիրուն երեխան: Փոքրիկի խոշոր

աչքերը դէս ու դէն դարձան և տեսան՝ ում ին-
քըն ուզում էր:

Ստեփանն զգաց, որ մէկն իր փեշից քաշեց
և հետն էլ լսեց երեխայի քնքոյշ ձայնը:

— Հապա փռանը:

Ստեփանը, որ իր կեանքումը միշտ երե-
խաներ սիրել և սիրում էր, գործը թողեց և
ուրախ ուրախ նայեց մանուկին:

— Իմ պատիկ աղս, — ասաւ նա, — փռանը
հէնց հիմի կը շինէի, բայց ժամանակ չունեմ:

— Հապա երբ կը շինես, ծօր տւեց երե-
խան:

— Էգուց պատրաստ կը լինի:

Երեխան մի ոտքի վրա պտոյտ արաւ և
դուրս թռաւ. զոտն ետեւից նա ձայն տւաւ:

— Բեզ եմ ասում, փռանը չախչախ էլ ու-
նենայ:

Երեկոյեան Ստեփանը փռեց իր լւացքն և
եկաւ խոհանոց: Հինգ ընպէ չէր անցել, որ լսեց
տիկնոջ ձայնը:

— Ստեփան, հեշտահո ղիբ:

Հեշտահոը տուն բերելուց յետոյ՝ պորուչի-
կըն ուղարկեց նրան ծխախոտի:

Ստեփանը յարմար միջոց գտաւ և խանութ-
պանից մի հին լրագիր խնդրեց փռանի համար:

Յետոյ նրան հրամայեցին հեշտահոը սրբել:
Նա արդէն սովորել էր իր կոճակները սրբել.
ուսկու պէս փայլեցրեց հեշտահոը: Յետոյ տիկն-

նը հրամայեց Ստեփանին վաղը փայտ ճղճղել և չարդախումը դարսել:

Երբ ամենքը քնեցին և Ստեփանը գործից պրծաւ, նա շինեց փռռանը, չախչախն էլ կըպցրեց, մի երկար պոչ էլ կասեց ու քնեց:

Նոր բնակարանը շատ դուր եկաւ Ստեփանին. դարակների վրա պայուսակների փոխարէն կաթսաներ ու կճուճներ էին շարուտած, կըրակքաշին վառարանի տակից գլուխը ցցել էր, պատից կախած էր մաղը: Այդ բոլորը յիշեցնում էին Ստեփանին իրանց տունն ու տեղը:

Միւս առաւօտն՝ արևածագին՝ Ստեփանը զարթնեց. նա փռռանը ձեռքն առաւ շուռէ շուռ տաւ, չախչախն ու պոչն էլ շարժեց, հաւանեց և գնաց վառելիք փայտ ճղճղելու: Այն էլ վերջացրեց, գնաց լացարար կնոջ մօտ աշակերտութիւն անելու:

— Եթէ լացքը լաւ դուրս գայ, տիկինն ինձ կը պահի, — մտածեց Ստեփանը:

Լացարար կինը ծիծաղելով ցոյց տաւ նրան, թէ ի՞նչպէս պիտի օսլայել և արթուկել: Կիսալուրջ, կիսաժպիտ լսում էր Ստեփանը կնոջը և աշխատում բոլորն ըմբռնել և սովորել:

Լացարարը ծիծաղը չէր կարողանում զրսպել, երբ տեսաւ, թէ ի՞նչպէս է Ստեփանն արթուկում փոխնորդները:

— Շնորհակալ եմ, դժար բան չի եղել:

— Ստեփան, Ստեփան, — ձայն լաւեց դրսից:

Տիկինը պատշգամբի վրայից սաստիկ բարկանում էր: Երբ Ստեփանին խոհանոցումը չըգտաւ, նա կարծեց, թէ անգործ անբան մի տեղ նստած կը լինի:

— Ո՞ւր ես կորել, չըւել ես, չըկաս. — այս խօսքերով դիմաւորեց տիկինը Ստեփանին:

— Ես, տիկին, լացարար կնոջից սովորում էի լացք արթուկելը:

— Զամբիւղն սո, գնանք փողոց, այսուհետև դու պիտի կերակուր պատրաստես... Ես քեզ ամեն բան ցոյց կըտամ և դու պիտի սովորես: Դենշչիկը պիտի ամեն բան անի:

— Կը սովորեմ, — ասաւ Ստեփանը:

— Ամեն օր ճաշերից յետոյ իմ տղայիս հետ պիտի գնաս զբօսնելու: Տար նրան դաշտը... անտառը... նրան մաքուր օդ է պէտք:

— Աչքիս վրա, ուրախութեամբ, — ասաւ Ստեփանը:

Մեծ ուշադրութեամբ Ստեփանը լսում էր տիկնոջ տաժ խրատները, թէ ի՞նչպէս ինքն այսօր կողիկներ պիտի պատրաստէր:

— Ով սուրբ Թարգմանիչ, ոտիդ մեռնեմ, դու օգնիր... համեղ կերակուրներ պատրաստեմ, որ տէրերիս դուր գայ, — աչքը կրակի վրա քլքլթացող կաթսային տնկած՝ աղօթում էր Ստեփանը:

— Իսկ փռռանը. չէ՞ որ խոստացար, — ձայն լաւեց ետևից:

Վալօղեան էր. նա դռան քամակից ժպտում էր:

— Փռուսնը պատրաստ է:

— Ո՞ւր է:

Երեխան նկատեց և մօտ վազեց:

— Իսկ չախչախը:

— Չախչախ էլ ունի: Լսիր՝ ինչ եմ ասում,

իմ պատիկ աղա՛. մայրիկը հրամայեց, որ ճաշից

յետոյ քեզ տանեմ դաշտը մանածելու. հէնց էն-

տեղ էլ փռուսնը բաց կը թողնենք, թռչունի

պէս ծուլ ծուլ կը լինի:

— Կը խշխշայ:

— Հապա չէ՛. կը շխշխկայ, կը մրթմրթայ:

Իսկ դու հիմա գնայ մայրիկից մի կծիկ թել

խնդրիր, մինչև ես կերակուրը պատրաստեմ:

Սաղալով, խնդալով՝ դուրս թռաւ մանուկը

խոհանոցից. նա ուրախ էր, որ վերջապէս գտել

է մէկին, որ իրան հասկանում է: Ժամը երկու-

սին՝ տիկինը հրամայեց ճաշ տալ:

— Դու պէտք է սովորես սեղանին սպասա-

ւորել:

Ստեփանը տիկնոջ խօսքերը չըհասկացաւ

և ասաւ.

— Հրամանք ես:

Վախվախելով, շփոթւելով՝ դրաւ նա ապու-

րը սեղանի վրա: — «Վայ թէ չըհաւանեն», մտա-

ծում էր Ստեփանը:

Պօրուչիկն, ըստ սովորականին, բարկացած

էր. մի երկու գդալ խիշտեց նա և քիթ ու պոռուզը ժողովեց:

— Այս ի՞նչ է, էլի սոխ չըկայ մէջը, — մըռ-

մուաց նա և այնպէս նայեց Ստեփանի երեսին,

որ խեղճի դողը բռնեց:

— Քեզ եմ ասում, էգուց կերակուրը սո-

խով լինի, հասկացար:

— Հրամանք ես, — փնթփնթաց Ստեփանը:

— Ստեփան, — ասաւ տիկինը Վճռական կեր-

պով, — ապուրի մէջ մի փոքր սոխ տեսել եմ

թէ չէ՛ օրն էգուց քեզ ես կուղարկեմ ուտը:

— Հրամանք ես, — դարձեալ շշնջաց Ստե-

փանը. մոլորել էր, թէ որին լսէր:

— Չը գիտեմ, ի՞նչ կը նշանակի, — խօսեց

պօրուչիկը, — ես հրամայում եմ, դու հակառակն

ես ասում. էլ ի՞նչ կարգապահութիւն կը լինի:

— Կարգապահութիւնս օրն է. յիմար յիմար

դուրս ես տալիս: Ես թոյլ չեմ տայ, որ իմ վը-

րայից սոխի հոտ գայ: Իսկ եթէ դու սոխ սի-

րում ես, գնա գինետունը, սխառով շինած եր-

շիկ կեր: Բայց այսքանն իմացիր, որ այնուհե-

տև քեզ սեղանատունը չեմ թողնի:

Պօրուչիկն այնպէս մի հայեացք ձգեց կնոջ

վրա, որ տեսնողը կը կարծէր, թէ մի սիրտ

ծակող, վիրաւորիչ խօսք սրտի ասէր: Բայց նա

լռեց:

— Ապուրը փաս չունի, Ստեփան, վատ չէր,

— ասաւ տիկինը, — այժմ միւս կերակուրը բեր:

Ստեփանն ուրախութիւնից չը կար. առօք փառօք հաւաքեց նա ափսէները և մօտ բերեց կողիկը:

Այր ու կին լուռ ու մոռնջ ուտում էին՝ իրար թթու դէմք ձգելով: Երեխաննայեց Ստեփանին և շրթունքներով նշաններ արաւ յսնկարծ նա փռօռնի ձայնով բռնացրեց:

— Սնաս, — ճշաց պօրուչիկը, — միս ինչ է, ճաշի վրա երգն էր պակաս... Ե՛ս քեզ:

Երեխան լլկւեց:

— Է՛յ, քեզ եմ ասում, — դարձաւ Ստեփանին պօրուչիկը, — ճաշից յետոյ փոստը կերթաս, նամակ կը տանես:

— Ես հրամայել եմ Ստեփանին՝ ճաշից յետոյ Վալօդեային տանի զբօսնելու, իսկ փոստը ինքդ կարող ես երթալ:

— Այսպէս բան չի լինի, կարգապահութիւնը խախտում է:

Պօրուչիկն ուսերը թափահարեց, բարկացած՝ անձեռոցիկը շարտեց և մտաւ իր առանձնասենեակը:

է

Տիկնոջը հաճոյանալ միանգամայն աջողեց Ստեփանին:

Տիկնոջը գտաւ, որ փոխնորդները հիանալի լւացած էին. ուրախութիւնից ցնծում էր, որ շրջագգեսաների խշխշոցը ողջ տունը բռնել էր:

Մինչև անգամ կասկածեց՝ միթէ իրաւ Ստեփանն ինքն էր օսլայել և արթուկել:

Երբ փորձելու ժամանակամիջոցը լրացաւ, Ստեփանը դարձաւ տիկնոջը.

— Ինձ պիտի պահէք, տիկին, թէ ոչ:

— Կաց: Բայց տես, չըծուլանաս:

Տիկնոջը միանգամայն զարմացել էր Ստեփանի աշխատասիրութեան վրա:

— Գննձ է, գննձ, ոչ թէ դենշշիկ, — մտածում էր տիկինը:

Լուսաբացից մինչև խոր գիշեր Ստեփանը շարունակ գործում էր: Լւացարար, խոհարար, սպասաւոր, աղախին, դայեակ — բոլորը նա էր:

Մի խօսքով տիկնոջը պահանջում էր, որ Ստեփանն ամեն բան կարողանայ կատարել: Երբէք նրան հանգիստ չէր տալիս: Բանն այս է, որ այնքան անընդհատ չարչարանքը Ստեփանի վրդին էր, և նա երբէք չէր նեղանում, կամ տըրտնջում: Նա ուրախ էր, որ ինքն առանձին կացարան ունի և հրացանի ու պայուսակի փոխարէն՝ կաթսաների և ափսէների հետ գործ ունի:

Այդքանը չէր Ստեփանի բաւականութիւնը. նա սրտով ցանկանում էր իրան մի համակրող, մի սրտակից ունենալ, և այդ ցանկացածը նա գտել էր պօրուչիկ Տրեգուբովի տանը: Այդ ուրախութեան սկիզբը դրեց այն օրը, երբ առաջին անգամը Ստեփանը Վալօդեային տարաւ զբօսանքի:

Ի՞նչ ուրախութիւն էր Վալօդեայի համար, երբ ահագին փռռանը խշխշալով, բռբռալով՝ երկինք բարձրացաւ:

Տուն որ դարձան, Վալօդեան ասաւ Ստեփանին.

— Ի՞նչ ուրախ եմ, Ստեփան, որ դու մեզ մօտ եկար... Իսկ դու էլ ուրախ ես, թէ ոչ:

— Ես ձեզանից աւելի ուրախ եմ, — ասաւ Ստեփանը:

Երեխան այժմ իր համար մի խաղընկեր էր գտել, որ մինչև այդ օրը չուներ: Մանկական սիրտը շարունակ որոնում է մէկին, որ իր ուրախութեանն ուրախակից և տխրութեանը տըխրակից լինի, իսկ Վալօդեան զրկած էր մինչև օրս այդ բաւականութիւնից և գիտէր, թէ ի՞նչ դժւար բան է միայնութիւնը: Միակ մայրն էր, որ սիրում էր երեխային՝ վայր ընկնելիս, կամ լալիս՝ նա էր, որ քաղցրաւենիներով ու անուշեղէններով փոքրիկի սիրտն առնում էր. մայրն էր զաւակի պաշտպանը՝ խստասիրտ հօր բարկութան ժամերին, որը միշտ կրկնում էր թէ երեխայի օգուտն է, որ չարութիւն անելիս պատիժ տաս նրան: Բայց ի՞նչ արած, որ միևկողմից մայրն ինքն էլ չէր սիրում, եթէ երեխան երբեք երբեք վազում էր մօտը՝ իր սրտի ուրախութիւնը մայրիկին պատմելու: Ի՞նչպէս չը բարկանար տիկինը. նա սիրում էր ձեռագործի ժամանակ՝ մտածել, օրինակ՝ ի՞նչպէս պի-

տի հագնէր ու պճնէր, եթէ իր ամուսնին գնդի հրամանատար շինէին: Այսպիսի բոպէին յանկարծ, Վալօդեան գալիս էր և դատարկ բաներով իրան ձանձրացնում:

— Կաւ, լաւ, գնա խաղա, ինձ արդելք ես լինում, — ասում էր մայրը, երբ երեխան մի սիրուն թիթեռնիկ, կամ ալւան ծաղիկ տեսած ժամանակ՝ վազէ վազ փարում էր մօր պարանոցով ու սրտի հրճանքով պատմում: Իրաւ է, մայրը երեխայի համար խաղալիքներ միշտ առնում էր, բայց ինքը բոլորովին չէր հետաքրքրում, թէ թղթէ ձին՝ ի՞նչպէս է անիւների վրա շրջաններ անում, կամ հոլն ի՞նչպէս է պլտտում ու բղղում:

— Քաշւիր, գնա, մի ձանձրացնի, — ետ էր մղում երեխային մայրը:

Մանկական սիրտը խոր խոցող այդ խօսքերն առիթ տւին Վալօդեային սառչել մօրից: Երեխան սիրում էր մօրը միայն ինչպէս պաշտպանի, բայց այդ չէր այն կաթոգին սէրը, որին փոքրիկի սիրտը ձգտում էր: Իսկ հօրից Վալօդեան միայն վախում էր. հօր խոժոռ յօնքերը, վայրագ դէմքը և սառն աչքերն երեխային միայն վախեցնում էին: Այն օրից, որ լամպը կոտրելու պատճառով՝ հայրը Վալօդեային ծեծել էր, տղան գտնում էր, որ հայրն իր ամենաօխերիմ թշնամին է, որը ինչ կամենայ, կարող է իրան անել, իսկ ինքը հնար չունի նրան դիմադրելու:

եւ Վալօղեան աշխատում էր չըզրգուել հօր բարկութիւնը, այդ պատճառով ստիպւած էր լռելու: Բայց մի աշխոյժ և ժիր երեխայի համար, որ ամեն տեղ և ամեն ժամանակ ձգտում էր իր զգացմունքներն ու իր միտքն արտայայտելու, հեշտ չէր հօր ներկայութեամբ շարունակ լռու մնալը: Հայրը նկատել էր, որ հէնց ինքը ներս էր մտնում սենեակ թէ չէ, Վալօղեան աշխատում էր դուրս ծլկել:

— Ո՞ւր ես դուրս կորչում. կարծեմ, ես քո հայրն եմ, — գոչում էր պօրու չիկը:

Երեխան լռում էր:

— Քեզ եմ ասում, գայլի ձագ, — խրոխտում էր պօրու չիկը. — դու պարտական ես հօրդ սիրել: Նրանց բնակւած տանը Վալօղեայի հասակակից ընկերներ չը կային և երեխան բոլորովին միայնակ էր:

Եւ, յանկարծ, այս դեղնած ու գունատ դենշչիկի մէջ, որը սկզբում իր համար շատ ծաղրալի էր, երեխան գտաւ այն, ինչ որ պակաս էր իրանց ընտանիքի մէջ:

Վալօղեայի սիրտը զգաց, որ Ստեփանն երեխաներին սիրում է և կը սիրի նոյնպէս իրան: Փռռան թողնելուց որ տուն վերադարձան, Վալօղեայի լեզուն էլ բուն չը դրաւ. նա անդադար խօսում էր Ստեփանի հետ. պարզ երևում էր, որ նա ուզում էր մինչև օրս սրտում թափարած զգացմունքները մի ան մի արտայայտել:

— Գարունը որ դայ, քեզ հետ անտառ կերթանք, հա:

— Կերթանք, — պատասխանում էր Ստեփանը:

— Գիտես, որ անտառն եմ ասում. այն՝ որ գերեզմանատան ետևն է: Օ՛հ, ի՞նչքան ծաղիկներ կան այնտեղ:

— Էն ի՞նչ անտառ է, մանր թփեր ու մացառներ են, մենք կերթանք մեծ անտառը. եթէ իմանաս՝ ի՞նչ լաւ տեղ է:

— Ի՞նչ կայ այնտեղ, — հետաքրքրութեամբ հարցրեց երեխան և նրա ժպտալից աչքերը փայլեցին:

— Անտառումն ի՞նչ կը լինի. տեսակ տեսակ ծաղիկներ, խոտեր, թռչուններ, ճաշայ շոքերին հով ու զով տեղեր:

— Իսկ գայլ էլ կա:

— Կարող է լինել, բայց ամառը գայլից երկիւղ չը կայ. ամառը գայլն ինքն է մարդուց փախս տալիս...: Ձմեռն ուրիշ բան է, և Աստուած հեռու տանի, եթէ քաղցած էլ է:

— Իսկ քո ասած անտառը ո՞րտեղ է:

— Գետի միւս երեսին:

— Ի՞նչ հիանալի տեղ, որքան ուրախ եմ, Ստեփան, որ դու մեզ մօտ ես:

Տանը Վալօղեան այս անգամ չը կարողացաւ, լսածները մօրը չը պատմել:

— Մայրիկ, գարունը որ գայ, ես ու Ստեփանն անտառ կերթանք:

— Գնահ, Ստեփանին ապա՛ թող հեշտաեռը դնի,— պատասխանեց սառը կերպով մայրը:

— Իսկ, մայրիկ ջան, դու ինձ համար հրացան կառնե՞ս:

— Կառնեմ, կառնեմ. միայն թէ՛ դու գլուխս մի՛ տանի:

Վալօդեան մնաց շփոթեալ՝ մի՞թէ կարելի էր այդքան անտարբեր վերաբերել անտառի պէս հիանալի բանին:

Երեսան ոչինչ չը պատասխանեց մօրը, նա շտապեց խոհանոց Ստեփանին ասելու որ հեշտաեռը դնի. միևնոյն ժամանակն էլ հարցնելու, թէ երբ անտառ դնան, դայեր կը տեսնե՞ն, թէ՞ ոչ: Եթէ ուղիղ է, որ գայլն ամառը մարդու չի ուտում, ապա ուրեմն լաւ կը լինէր, եթէ ինքն էլ գայլ տեսնէր:

Ը.

Ինչպէս Ստեփանի, նմանապէս և Վալօդեայի համար սկսեց նոր և լաւ կեանք: Փոքրիկն այլևս սենեակում չէր կարողանում նստել: Տխուր էր իր համար: Մայրիկը բարձ է կարում, և ով գիտի ինչ է մտածում: Նա չի սիրում, որ տղան չարութիւն անի և զանազան դատարկ պատճառներով իրան ձանձրացնի. հայրը թթեալ դէմքով իր առանձնասենեակում է նստած: Իսկ խոհանոցումն ազատ է, ուրախ. Ստեփանը սիրով լսում է միշտ երեխայի շողակրտանքները, համակրում

է նրա երևակայութիւններին. երկուսով միասին դարնան զբօսանքների մասին են մտածում: Ստեփանը կերակուր է պատրաստում, երբեմն, անուշ կերակուրների համե է աղային ցոյց տալիս, ժպտում է նրա երեսին. այժմ Ստեփանն առաջւայ պէս ծաղրելի չէ, հիմի Վալօդեան Ստեփանին սիրում է: Բայց Ստեփանի սէրն էժան չի նստում Վալօդեային, շատ ու շատ անգամ է մայրն նրան յանդիմանում, որ շարունակ խոհանոցումն է լինում:

— Մի՞թէ ամօթ չէ, ինքդ ազնւական երեսայ և դենչիկի հետ ես ընկերութիւն անում:

— Տխուր է սենեակումը,— երկար ու բարակ ծոր էր տալիս մանուկը:

— Ամօթ քեզ, մօրդ հետ նստելը տխուր է, իսկ դենչիկի հետ ուրախալի:

Մի անգամ՝ երբ մայրն իր խրատներն սկսել էր, հայրն իր սենեակից դուրս եկաւ և խիստ ձայնով հարցրեց.

— Ի՞նչ կայ, ի՞նչ բան է:

— Այս մեր Վալօդեան բան ու գործ է շինել Ստեփանի մօտ խոհանոց գնալը:

— Այդ ինչ էնչանակում, ռամիկ զիւղացու հետ բարեկամութիւն ես անում: Ես քեզ ցոյց կը տամ: Վալօդեան պինդ կպաւ պատին. նա յօնքերի տակից հօրը նայելով՝ մտածում էր.

— Չէ, այդ երբէք չի լինի, որ ես Ստեփանի մօտ չը գնամ:

Եւ աշխատում էր զգուշութեամբ սենեակից դուրս ընկնել և խիստ ուրախանում էր, երբ հայրն ու մայրը հիւր էին գնում:

Մի անգամ, ճաշից յետոյ, մայրը Ստեփանին ուղարկեց խնձոր առնելու:

— Լսիր, Ստեփան, քաղցր խնձոր առ, — ասաւ Վալօդեան:

Ստեփանը լուռ, աչքը ձգեց երեսայի երեսին. նրա դէմքը կարծես պարզ ասում էր, որ ինքը պատրաստ է ողջ փողոցը ոտնատակ տալու, միայն թէ կարողանար քաղցր խնձոր գտնել:

Առօք փառօք, խնձորը սկուտղի վրա դրած՝ մօտ տարաւ Ստեփանը: Տիկինն արդէն նրան սովորցրել էր, որ ազնականների տներում ամեն ինչ պիտի քաղաքավարութեամբ սկուտղի վրա մօտ բերել և ոչ թէ փողոցից բերած թղթէ տուրակներում:

Մայրը Վալօդեային մի խնձոր տւաւ, իսկ Ստեփանը հեռացաւ դռան մօտ կանգնեց:

— Իսկ Ստեփանին խնձոր չէս տալիս, մայրիկ, — ասաւ Վալօդեան:

— Կոտրած գգալի պէս մէջ մի ընկնի, — տհաճութեամբ պատասխանեց մայրը:

Ստեփանն իսկոյն դուռը ծածկեց և հեռացաւ. նրա ուրախութեանը չափ չը կար, Վալօդեան նրան սիրում էր, նրա մասին հոգում:

— Այդ ինչ յիմարութիւն է, — գոչեց հայրը, —

ոամիկ գիւղացուն խնձորով մեծարել:

Երեսան լռեց. նա խնձորը ձեռքին խաղացնում էր և չէր ուտում: Նա չը կարողացաւ ըմբռնել թէ ինչի՞ չէր կարելի իր սիրելի Ստեփանին խնձոր տալ:

— Ես մտքիցդ կը հանեմ քո բարեկամութիւնը ծառայի հետ, — գոչեց հայրը:

Բայց կուշտ կերած պօրուշիկի աչքերն արդէն կուշ էին եկել. նա հազիւ սեղանից վեր կացաւ և գնաց քնելու:

— Մայրիկ, մի խնձոր էլ տուր ինձ, — խնդրեց Վալօդեան:

— Իե՞ս տւածս չես էլ կերել:

— Տո՛ւր, մայրիկ չան:

— Այդ կեր, նորը կը տամ, իսկ եթէ Ստեփանի համար ես խնդրում, բոլորովին չեմ տայ: Ես մի հատ խնձորը չեմ ափսոսում, բայց չեմ կամենում նրան երես տալ, այդ նրա համար վնաս է:

— Բայց ի՞նձ հօ չի վնասի:

— Ինչ յիմարն ես. դու բոլորովին ուրիշ բան ես. դու ունես մայրիկ, քո մայրիկը փող ունի, կարող է քեզ համար խնձոր գնել: Իսկ Ստեփանն էնպէս չի ծնւել, որ քաղցր բաներ ուտի: Նա խնձոր առնելու համար փող չունի, և եթէ դու այսօր նրան խնձոր տաս, նրա սիրտն էգուց էլ կուզի, այնուհետև զողութիւն կանի և նրան բանտ կը դնեն: Ես Ստեփանի բարին եմ

ցանկանում, թէ չէ խնձորը չեմ արհեստում:
Հասկանում ես:

Երեխան ոչինչ չէր հասկանում. նա մօր
խօսքերի մէջ միայն անարդարութիւն էր նկատում,
ուրիշ ոչինչ. ուստի և ասաւ.

— Ես իմ խնձորս կը տամ Ստեփանին:

— Իսկ դու մոռացար հօրդ խօսքը:

— Իսկ դու հայրիկին մի ասի, — ասաւ մանուկը:

Ննջարանից արդէն ծանր խռմփոցը բարձրացել էր. Վալօդեան լսեց և տուն ընկաւ խոհանոց: Ստեփանն այնտեղ չէր, երեխան նրան գտաւ բակումը ջրհօրից ջուր քաշելիս:

— Ես քեզ համար խնձոր եմ բերել, — գոչեց Վալօդեան: Նա շատ ուրախ էր, որ իր խօսքը կատարեց:

Ստեփանը սրտաշարժեց. նա շնորհակալութիւն չարեց. նա ջրի դոյլը դրել էր դեմնին և իր սիրելու երեսին նայում:

— Ինչի՞ չես վերցնում, — խօսեց Վալօդեան:
— Դու կեր, շնորհակալ եմ, որ ինձ մտաբերել ես... Ես խնձոր չեմ ուտում... Ինձ միաս է, — ասաւ Ստեփանը:

— Վնաս է, ասում ես. ուրեմն, ես քեզ համար անուշեղէն կը բերեմ, երբ ինձ կըտան... Ես ամեն բան կը բերեմ քեզ համար:

— Աման, ի սէր Աստծու, էտ բանի համար քեզ կը պատժեն, ես անուշեղէն էլ չեմ սիրում:

— Ո՛չ, պէտք է ուտես, — ասաւ երեխան խնձորը կծելով: — Ինչպէս կարելի է էսպիսի քաղցը խնձորը չը սիրել... շատ քաղցր է... շատ... Միշտ էսպէսներն ան:

Ստեփանն ուրախ ուրախ միւս դոյլն էլ լցրեց և տարաւ խոհանոց:

Թ.

Ստեփանը գոհ էր իր վիճակից, նա հոգւով ուրախ էր մանաւանդ, որ ազատել է զինուորական ծառայութիւնից: Կամաց կամաց նա խոհանոցի կատարեալ տէրը դարձաւ: Տիկինը ոչ մի բանի չէր խառնւում, միայն հետևում էր, որ դենչնիկն երբեք առանց գործի չը մնայ: Ստեփանն ինքն էլ աշխատում էր կատարելագործւելու: Հարևանի խոհարարը սովորեցրեց Ստեփանին մի տեսակ իւղահաց պատրաստել, որով նա ուզում էր Վալօդեային պատել: Տիկինն էլ Ստեփանի հետ փողոց չէր գնում. նա համոզւել էր, որ ծառան հատ կողէկ չէր վերցնի և պակաս պաշարեղէն չէր առնի: Հիանալի լացք էր անում Ստեփանը, տիկնոջ շրջագրեստներն այնպէս էին խշխշում, որ մարդի հաճոյքը գալիս էր:

Գարունքը բացւեց և Ստեփանի համար մի նոր աշխատանք էլ աւելացաւ: Բոստանն էր: Ստեփանը շատ գոհ էր այդ բանից: Բոստանն

յիշեցնում էր նրան իր հայրենի գիւղը, այնտեղի դաշտային աշխատանքները:

Ճաշը որ վերջանում էր, ամանները լւանում էր, բահն ու փոցխը վերցնում ու գնում բոստան՝ մարգեր փորելու: Վալօղեան իր փոքրիկ բահն առնում էր ու գնում Ստեփանի մօտ:

— Ես եկել եմ քեզ օգնելու:

Ի՞նչ եռանդով և ուրախութեամբ էր առաջ գնում աշխատութիւնը, գարնանային մայր մտնող արևն իր սսկեփայլ ցօղը սփռում էր մարգերի վրա, խոստանալով վաղան համար աւելի տաք և քաղցր եղանակ:

Յնձում էր Վալօղեան, խնդում էր Ստեփանը: Երբ նա բահը ցցում էր գետնի մէջ և նստում քիչ հանգստանալու, նա աչքերը դարձնում էր անցեալ տարւանից անմշակ մնացած սէղ ու խոտերով ծածկւած գետնին և հանգիստ սրտով խորը շունչ քաշելով՝ մտմտում, թէ որ տեղ ի՞նչ յարմար է ցանելու:

— Ամեն տեսակ համեղ բանջարեղէն կը ցանեմ ձեզ համար, — ասում էր Ստեփանը Վալօղեային, — պոլոճիկ, գաղար, ճախնդեղ...

— Հապա շաղգամ, հապա խաշխաշ, — հարցնում էր Վալօղեան:

— Շաղգամներ ցանեմ, որ մէկը մի տարեկան երեխայի գլխի չափ, վարունգ, սեխ, ձմեռուկ...

Ստեփանը նորից բահը ձեռքն էր առնում:

Մի քանի օրից՝ բոստանը ճանաչել չէր լինի. մեծ մեծ մարգեր, աղիւս շաղ տւած միջնակներ, թմբեր, առուներ, բոլորը կարգին ու կանոնին ցանւած ու ջրւած: Պատի գլխին էլ խաչմէրուկ կապած փայտին հագցրել էր հին մուշտակ, մի զինւորի հին գդակ էլ դրել գլուխին, թռչուններին վախացնելու համար: Քամին որ կողմից փչում էր, խրտուիլակն էլ թևերը փռած՝ քամու ուղղութեամբ դառնում էր:

Մի քանի օրից՝ Վալօղեան ուրախ ու զուլարթ ներս ընկաւ խոհանոց և գոչեց.

— Ստեփան, մի թխլիկ բան է բուսել:

Երեխան խնդրում էր, որ Ստեփանն իր հետ գնա. տեսնի՞ ի՞նչ է:

Ստեփանը գործը թողեց և շտապեց բոստան: Պոլոճիկն էր ծիլ տւել, գլուխը հողի տակից դուրս ցցել:...

Սկսեցին զբօսանքի օրերը. այս զբօսանքներն աւելի ևս մօտացրին Ստեփանին Վալօղեայի հետ, երեխան իր մանկական մտքի թռիչքներն էր յայտնում Ստեփանին, իսկ վերջինս իր հայրենի գիւղի յիշողութիւններից էր նաղլ անում:

Վալօղեան երբէք մեծ անտառումը չէր եղած, և երբ յանկարծ մտաւ դարաւոր կաղնիների մէջ, որոնց արմատների մօտ խոտերի տակ մանուշակներն էին գլուխները թագցրել, նա հրճեց ու ցնծաց:

— Ի՞նչ հրաշալի է, զիլ ձայնով կանչեց մա-

նուկը. էնպէս չէ՞, Ստեփան, որ և՛ հրաշարի է և՛ սարսափելի. չի՞ կարող անտառի խորքից յանկարծ գայլ դուրս գալ... Բայց դու հետս ես, ես գայլից չեմ վախում, երանի դուրս գայ, որ տեսնեմ:

Փ.

Մայիսի 21 ին պօրուչիկի կնոջ տօնն էր:

Մի շաբաթ առաջ՝ տիկինը յայանեց Ստեփանին, որ ինքը նոյն օրը մեծ հրաւէրք է ունենալու:

— Հասկանում ես, ի՞նչ կայ, պէտք է այն օրը մի շատ նշանաւոր բան պատրաստել ընթրիքի համար:

— Կը շինենք, տիկին, — գլուխը տմբացրեց Ստեփանը:

— Ի՞նչ ես կարծում, ի՞նչ տապակա շինենք, որ լաւ լինի:

— Գիտէ՞ք ինչ կայ, տիկին, այսօր մի ժամով ինձ թոյլ տւէք գնամ նահանգապետի խոհարարի մօտ, որի հետ ես բազարում ծանօթացայ. ես նրանից կը տեղեկանամ, թէ նահանգապետի տօնի օրն ինչ կերակուրներ է պատրաստում:

Այն միտքը, թէ նահանգապետի տւած ընթրիքի նմանն ինքն էլ կարող է ունենալ, միանգամայն հիացրեց պօրուչիկի կնոջը: Տիկինը

ցանկութիւն ունէր մի շքեղ փայլ տալ իր հրաւէրքին, որ իր ընթրիքով զարմացնի գնդի մէջ բոլոր ծառայողներին կանանց:

Հիանալի միտք էր դենշչիկի առաջարկութիւնը:

— Շատ լաւ, երեկոյիս հեշտաեռը ժողովիր և գնա... բայց աշխատիր, — հասկացրեց տիկինը — ամեն բան տեղեկանալու... Տապական... շաբարահացերը...

— Հանգիստ եղէք, տիկին:

Նահանգապետի խոհարարը, որ մի ուրախ և բարեօրրտ մարդ էր, փոթկաց, երբ իմացաւ, թէ Ստեփանն ուզում էր իր հետ ոտ ձգել:

— Այ դու դժմագլուխ, — ասաւ նա, — մի՞թէ դու կարող ես նահանգապետի վայել կերակուրներ պատրաստել:

— Ինչի՞ չեմ պատրաստի. եթէ սովորցնես, ես էլ կը պատրաստեմ:

— Հա՛, հա՛, հա՛, — կչկչաց խոհարարը, չէ՛, ախպէր, պատրաստես էլ՝ էն չի դուրս գայ... Շատ լաւ, ականջներդ լայն բաց արա և լսիր, թէ ինչ կերակուրներ կային նահանգապետի տօնին:

Եւ խոհարարը սկսեց թւել. սօտէ, մայեօնեգ...

Ստեփանը լսում էր և ոչինչ չէր հասկանում:

— Խնդրեմ, պարզ ասա. ի՞նչ սառը մօտ բերելու կերակուր ունէիք:

— Զութի մայեօնեգ:

— Զուլթիսի ձուկը հասկանալի է, իսկ միւսը... Ը ը ը... —

— Լեզուդ չի էլ պտտուում:

— Գու ինձ պարզ հասկացրո՞ւ... —

— Չես հասկանայ, չէ: Հարկաւոր է, որ մարդ գլխուսն խոհարարի և ոչ թէ դենշչիկի խելք ունենայ:

Բայց և այնպէս բարեսիրտ խոհարարը երբ տեսաւ Ստեփանի յուսահատ դէմքը, խըղձաց նրան և ասաւ.

— Գիտես ի՞նչ... թո՞ղ քո տիկինը մի խոհարարական գիրք առնի, նրա մէջ ամեն կերակուր գրեած է. թող կարգայ ու քեզ հասկացնի մայեօնեզ շինելու ձևը: Ինչպէս գրքում գրեած է, էնպէս էլ պատրաստիր... մի բան դուրս կը գայ էլի. հիւրերը եթէ չուտեն՝ կատուն կուտի ու կուտի:

Ստեփանը վերադարձաւ տուն:

— Հը՛, ի՞նչպէս արիր, — հարցրեց տիկինը:

— Ամեն բան իմացայ... Նահանգապետի մօտ առաջի կերակուրը եղել է սառը գուլթի սպիտակ սոսուով... անունը լեզուս չի պտրտում:

— Մայեօնեզ:

— Այն, այն... Յետոյ եղել է որսի միս, թուրաջներ և վերջը պաղպաղակ: Նահանգապետի խոհարարն այն էլ ասաւ՝ կերակուրների գիրք կայ, մի՞նն առէք:

— Առնելու կարիք չը կայ, ես ունեմ:

— Ուրեմն դուք ինձ համար կարգացէք էն սօսուի մասին... մնացածի համար անհոգ կացէք. չեմ ամաչացնի:

Պիտի ասած, որ Ստեփանը շատ էլ վստահ չէր, որ կարող կը լինի օրինաւոր կերակուր պատրաստել. բայց տիկնոջը հաւատացնում էր, որ իր շինած կերակուրները պակասութիւն չեն ունենայ... Իսկ եթէ յանկարծ վատ դուրս գայ... մանաւանդ անտէր մայեօնեզը:

Տասն անգամ տիկինը կարգաց և հանկացրեց մայեօնեզ շինելը, Ստեփանը համարեա անգիր արաւ, բերանացի սովորեց: Բայց դարձեալ կատկածում էր... սատանան հակառակ էր:

Նա վճռեց, դեռ օր առաջ՝ փորձի համար պատրաստի և տիկնոջն ուտեցնի: Խելօք էր մըտածել. տիկինը շատ հաւանեց:

Ստեփանին այգքանն էր պէտք. որսեղէնների ու թուրաջի տապակայի մասին երկիւղ չուներ... դժւար չէր խղի մէջ կարմրացնելը. պաղպաղակն էլ գիտէր ու պիտէր:

ԺԱ.

Տիկնոջ տօնի օրը նրանց դրացի սպայի դենշչիկն էլ աւելացաւ խոհանոցում. մեծ պատրաստութեան մէջ էին, կարգադրողն Ստեփանն ինքն էր:

Երեկոյեան ութ ժամին մօտ՝ հիւրերն սկսեցին հաւաքուել, պշրանք, շոպլութիւն ու շքե-

դուժիւն... Զինւորականները տիրաններն ու օրիորդներն այսօր պիտի ցոյց տային, թէ իրանք լաւ հասկանում են, թէ ինչ բան է պարահանդէս:

Պօրուչիկի կինն իր կանացի սուր աչքով գննելով հրաւիրւածները արդ ու դարձելով, վճռեց, որ բոլոր հիւրերիցն ինքն աւելի վերջին մօդայով ու շքեղ է հագնւած:

Նա շատ գոհ էր իր պարահանդէսից:

Եւ անհ, գալիս է Ստեփանը դենշչիկի սերժոնտը հագին, սպիտակ ձեռնոցներով, գաւաթներով ու բաժակներով լիքը մատուցարանը ձեռքին. նրա ետևից գնում է հարևանի դենշչիկը կաթնամանով, կիտրոնով, քաղցրաւենիքով և թխածքներով բեռնաւորւած: Երկու սպասաւորների դէմքերին լրջութիւն է տիրում. նրանք երկիւղ էին անում, չը լինի թէ յանկարծ տիրանների երկար շրջագոյնների պոչերը կը տրորեն, կամ մատուցարանները վայր կը ձգեն:

Տանտիրիկինը շատ գոհ էր, նրա դատողութեամբ՝ ազնւական աների ծառաները սպասաւորելիս՝ այդպէս լուրջ դէմք պիտի ունենան:

Բոլորն էլ հիացած էին փխրուն ու համեղ թխածքներից:

Հիւրերը հիացած էին և Վալօդեայից. տիրաններն ու օրիորդներն ամենքն անխտիր զգւում գուրգուրում էին երեխային և զւարճանում փոքրիկի մանկական սուր պատասխաններով: Ի մի-

ջի այլոց՝ Վալօդեային հարց տւաւ մի սպայի կին.

— Ո՞ւնն ես աւելի սիրում, քաղցրիկս, հայրիկին թէ մայրիկին:

— Ստեփանին, — ոչ տարաւ, ոչ բերեց Վալօդեան:

— Ո՞վ է այդ Ստեփանը, ապա ցոյց տուր:

— Այ նա, որ թէյ է բերում:

— Ամօթ չէ՞, անուշիկս, մի՞թէ այդպէս բան կասեն, — շեշտեց մի զինւորականի կինը:

— Երեխայ է, դեռ այդքանը չի հասկանում, — մէջ մտաւ մայրը:

Իսկ հայրը կատաղի աչքերն ուրրեց դեռ նախ՝ Ստեփանի երեսին, որին կարծես ողջ ողջ կամենում էր կուլ տալ, ապա իր որդու վրա խեղճ Ստեփանն երեխայի խօսքից քիչ մնաց թէյի մատուցարանը ձեռքից վայր էր ձգում:

— Ոչ, հոգիս, — ասաւ բարձր ձայնով պօրուչիկն իր կնոջը, — սխալ ես, այստեղ երեխայութեան բան չը կայ — մեր Վալօդեայի սրտում մեծերի պատիւը չը ճանաչելու հոգի կայ բուն դրած: Ինչ նայիր ինձ, Վալօդեան, այդ յիմարութիւնը քո գլխից կը հանեմ:

Տանտիրիկինը սարսափեց, չը լինի թէ յանկարծ ամուսինը հիւրերի մօտ մի խայտառակչութիւն հանէր:

— Ի՞նչ անհոգ կնոջ, սիրելիս, — պատասխանեց տիրանը քաղցրութեամբ, — ես մայր եմ, խօսք եմ տալիս, որ իմ որդին կուղղուի:

—Ափսոս չէ՛, շատ հիանալի երեխայ է,—
 ձայնակցեցին հիւրերը:

Տրեբուլովը ձայնը կտրեց և միջնադէպքն
 անցաւ խաղաղ:

Մինչ թէյը կը խմէին, գնդի երաժշտական
 խումբն եկաւ և հաշտումը տեղաւորեց:

Յանկարծ լաւեց քայլերդը: Սկսեցին պա-
 րերը:

Միւս սենեակումն էլ թղթախաղը սարքուեց,
 բոլորեքեան պարապած էին:

Այդ միջոցին էր, որ Վալոդեան աննկատե-
 լի կերպով տուն ընկաւ խոհանոց, և Ստեփանն ու
 նա շտապեցին բոստանը:

Մի քանի ըրպէից՝ ագարակն ու բակը մի-
 մեանցից բաժանող պատի վրա փայլեցին կար-
 միր և կապոյտ լապտերներ և վառուեցին ճրագ-
 ներ:

Տանտիրուհին հրաւիրեց հիւրերին ճրագվա-
 ոոցին նայելու:

— Ա՛խ, ինչ հիանալի է: Վերեից՝ լուսինը,
 ներքեից՝ ճրագները: Մի առանձին տեսակ լոյս
 է—նկատեցին տիկիները:

Ագարակում ամենքն ուրախ էին և զւար-
 ճութիւնն ընդհանուր էր. միայն Վալոդեան և
 Ստեփանն էին, որ կարծես մի տեսակ զբաղ-
 ւած էին:

Յանկարծ՝ մի քրքիջ լաւեց և այս ու այն
 տեղերում ճրագներն սկսեցին առկայծել և հանգ-

չել. որից յետոյ՝ ըրպէաբար փայլած բենգա-
 լեան կրակներից բոլոր հիւրերը կարմիր գոյն
 ստացան: Այս խաղը մեծ տպաւորութիւն թողեց
 հանդիսականների վրա:

Տանտիրուհին շատ գոհ էր, և իրաւունք
 ունէր. սպիտակ ձեռնոցներով սպասաւորող դեն-
 շչիկները, համեղ ու փափուկ թխածքները,
 որոնց նմանը, իր կարծիքով, գնդի ոչ մի սպայի
 հրակէրքին չէր մօտ բերւած, ճրագվառութիւ-
 նը, բենգալեան կրակներն և ամեն բան օրինա-
 ւոր էին՝ ինչպէս լաւ տներում: Իսկ այս ամե-
 նի թագն ու պսակը դեռ յետոյ էր լինելու. այդ
 ընթրիքն էր, որ ամեն բանով հաւասար էր լի-
 նում նահանգապետի ընթրիքին:

Մինչդեռ հիւրերը բօստանում գրօմնում
 էին, Ստեփանն իր օգնականի հետ սենեակում
 ընթրիքի սեղանը պատրաստեց:

Տանտիկինը քաղցր ժպիտով հրաւիրեց հիւ-
 րերին սեղանի: Ամենը բազմեցին:

Մօտ եկաւ ձուկը: Նախ՝ վերցրին տիկին-
 ներն իրանց ամուսինների, հայրերի և եղբայր-
 ների աստիճանին և դիրքին համապատասխան
 կարգով: Այնուհետև՝ հերթն եկաւ տղամարդ-
 կանց, կաւալերներին՝ դարձեալ իւրաքանչիւրի
 աստիճանին պատշաճ կարգով:

Ամեն կողմից հիւրերը գովում էին խոհա-
 րարի համեղ ձեռքը. թուրաջի տապական թէպէտ
 փոքր ինչ աւելի էր կարմրացրած, բայց մեծ

ընդունելութիւն գտաւ. պաղպաղակը սքանչելի էր, գինին քան ջուր առատ, ճիւղերը ցրեցին, երբ արշալուսի կարմիր շառաւիղը երկնքի արևելքը զարդարեց, Բոլորովին առաւօտ էր, երբ Ստեփանն իր ամանեղէնները ժողովեց և պառկեց քնելու:

Յերգում նա տեսնում էր բենգալեան կըրակը, հրավառութիւններն և ճոխ ընթրիքը. հետըն է՛ կարծես լսում էր Վալօղեայի ուրախ քրքիջն և այն խօսքերը, թէ Ստեփանին հայրիկից ու մայրիկից անաւել եմ սիրումս:

ԺԲ.

Նոր չէր, որ պօրուչիկը նկատել էր Վալօղեայի Ստեփանին սիրելը, իսկ այս բանը նրա նախանձն էր շարժում և բարկութիւնը բերում:

Վրդոված էր և որդու դէմ. ի՞նչպէս կը համարձակի իր որդին ագէտ, ուսմիկ ծառային սիրել ու իր հօրը չը սիրել: Պօրուչիկը վիրաւորւած էր նոյնպէս իր կնոջից. ի՞նչպէս է, որ չի կարողացել զաւակի մէջ դէպի հայրը որդիական սէր ներշնչել: Բայց Տրեգուբովն ինքն իրան չէր հարցնում, թէ ինչիցն է որ որդին իրան չի սիրում: Կրկնում էր միայն թէ՛ ինքը հայր էր և որդին պարտական էր իրան սիրելու, ինքն ամուսին էր և կինը պիտի իրան սիրէր:

Ստեփանին այնպէս էր առում Տրեգուբովը, որ եթէ կինը չը լինէր, վաղուց ինքը գենշիկին ուղարկած կըլինէր ոտը: Նա շարունակ առիթ էր որոնում Ստեփանի հետ կուելու, աշխատում էր նկատել նրա սխալմունքները, որ յետոյ կնոջը կարողանայ համոզել՝ Ստեփանին փոխելու: Պարզ երևում էր, որ անարգար կերպով հնարքներ էր մտածում Ստեփանին վըշտացնելու, որ սախի նրան մի յանդուգն խօսք իր դէմ բերանից թոցնելու: Այն ժամանակ ինքըն իսկոյն դուրս կանէր նրան, թէկուզ կինը որքան կամենար հակառակէր:

Բայց Ստեփանն երբէք պօրուչիկին ընդդէմ պատասխան չէր տալիս: Իրան հայհոյած ժամանակ՝ ինքը ձգւում էր ու պատիւ տալիս. իսկ երբ տէրը գոռում էր.

—Կորի, աչքիցս չքլի,—Ստեփանը լուռ ու մունջ սենեակից դուրս էր գնում: Դենշիկի այս համեստ վարմունքն աւելի էր կատաղեցնում պօրուչիկին:

Յրեկոյթի հետևեալ օրը՝ ճաշի ժամանակ՝ պօրուչիկը դարձեալ խոժոռւած էր: Նա դարձաւ Վալօղեային և սկսեց ըրթֆնշալ.

—Ես չը գիտէի, թէ դու այդպէս օձի ձագ ես. քո ծնողները քեզ ուտեցնում, հագցնում են և դու օտարների առջև նրանց ցեխն ես կոխում:

Յրեխան չէր հասկանում, թէ հայրն ինչի՛ է իրան յանդիմանում:

—Չես հասկանում հա՛, — գփւեց պօրուչիկը,
— ասածդ մոռացել ես... Այդ ո՞ր տգէտ և բամբիկ
ծառան է, որ քեզ համար հօրից ու մօրից ա-
ռաւել է: Անպէտք լակոտ:

Երեխան գլուխը կախած՝ իր ապուրն էր
խփշտում և ոչինչ ամօթ չէր գգում: Նրա լու-
թիւնն աւելի էր գրգռում պօրուչիկի բարկու-
թիւնը:

— Ես քեզ հարցնում եմ, լսում ես... ասա՛
չէս ամաչում որ այն խօսքն ասացիր:

— Չէ, — շշնջաց երեխան:

— Լսում ես, — դարձաւ պօրուչիկը կնոջը, —
ինչտեղ հասցրեց քո երես տալը: Սա ո՛չ ինձ և
ո՛չ քեզ մի բանի տեղ չի դնում: Քոնը միայն
այն է, որ պարահանդէսներ տաս ու պար դաս:

Տիկինը մինչև այժմ լռել էր. նա չէր ցան-
կանում, որ իր խնձոյքի քաղցր տպաւորութիւ-
նը խանգարէի, բայց մարդու անարգանքներին
այլ ևս չը կարողացաւ դիմանալ:

— Այդ ինչ քարոզներ ես կարդում, — կա-
տաղի կերպով ճշաց նա. — այդ ինչ խօսելու ե-
ղանակ է... Դէհ, կարող ես գնալ քո պաշտօ-
նատանը ճղաւել, ո՛չ թէ ինձ վրա:

Պօրուչիկը ձայնը ցածրացրեց:

— Խոստովանւիր, դու ինչպէս մայր պարտա-
կան ես որդուդ մէջ ու էր զարթնեցնել դէպի
իւր հայրը:

— Մի՞թէ երեխան կարող է քեզ սիրել, երբ

դու այդպէս գազանի աչքով ես նրան նայում:

— Մեծապէս շնորհակալ եմ, այստեղ էլ
հասանք... Ես գաղան եմ, հա՛: Եւ այս ասողը
մայրն է, իր որդու ներկայութեամբ...

— Ինքդ բաց արիր խօսակցութիւնը:

— Ո՛չ, այս անտանելի է... Ես քեզ ցոյց
կը տամ, որ հայր եմ, իմ տանս տէրն եմ...

— Չայնդ կտրիր, խնդրեմ, — խստութեամբ
ընդհատեց կինը. — քո ազուաւի դոցոյով ձանձրա-
ցրիր մեզ... Երեկ, երէկ թղթախաղում տար-
ւել ես և դրա համար այդպէս կատաղել ես:

Պօրուչիկը նորից ձայնը ցածացնելով՝ փռս-
փսաց.

— Ես ցոյց կը տամ, թէ ինչ եմ... Այդ ան-
պիտան դենշչիկն իմ տանս չի մնայ:

Երեխան սարսափահար եղաւ և նայեց մօր
երեսին. նա յօյս ունէր, որ մայրը կը պաշտպանի
Ստեփանին:

— Քեզ եմ ասում, ինձ նայիր — պատասխա-
նեց կինը. — եթէ մի այդպէս բան մտքովդ անցնի,
վա՛յ քեզ, յաւիտեանս էլ չես կարող մոռանալ:

Պօրուչիկը ձայնը փորը քաշեց, տապալկան
կերաւ ու գնաց քնելու:

ԺԳ.

Նախանձից տրաքւում էր պօրուչիկն, երբ
տեսնում էր թէ ինչպէս ուրիշներ ի երեխաները
իրանց ծնողներին սիրում են:

Այն, Վալօդեան իր հօրը չի սիրում, իսկ ի՞նչ պէս յանդգնում է ծառային սիրել, — մտամտում էր պօրուչիկը և այդ պատճառով ատում էր և՛ որդուն, և՛ դենշչիկին:

Վերջապէս նա մտքումը դրեց միջոցներ գտնել, որդուն իրեն սիրեցնելու:

— Այդ բոլորը նրանից է, որ ես նրան երես եմ տւել, խստութիւն շատ չեմ գործ դնում:

Այդ բանումն էլ կինն է մեղաւոր, ի՞նչպէս կարելի է երեխային չը ծեծել... Կինս չի հասկանում, որ ծեծն երեխայի օգուտն է... Ո՛չ, ո՛չ, Վալօդեային հարկաւոր է խելքի բերել:

Եւ խելքի բերելու միջոցը պօրուչիկը համարում էր ծեծը, միայն թէ վախում էր կնոջից: Նա լաւ յիշում էր, թէ ի՞նչ եկաւ իր գլխին, երբ մի օր կնոջ բացակայութեան ժամանակ ծեծեց Վալօդեային:

Մի ուրիշ միջոց փորձեց գործ դնել պօրուչիկը: Երեխայի մօտ ամեն օր կրկնում էր, թէ Ստեփանը անպիտան մարդ է, թէ խորամանկ է, թէ նա իր օգտի համար է երեխային մօտէ մօտ անում, թէ նա երբէք մտքովն էլ չի անցկացնում իրան սիրելը, կամենայ էլ չի կարող սիրել, որովհետև ինքը հասարակ ծառայ է, իսկ ծառաները չը գիտեն՝ սէրն ի՞նչ է...

Սակայն խօսքերն այն տպաւութիւնը չէին անում Վալօդեայի վրա, ինչ որ ինքը պօրուչիկն էր ցանկանում: Երեխան հաւատ էր ընծայում

իր սրտի ձայնին և ո՛չ թէ հօր ասածներին, իսկ սիրտը նրան ասում էր, թէ Ստեփանն իրան սիրում է:

Շատ ծանր էր թւում Վալօդեային, որ իր սիրելի Ստեփանին անարդար կերպով կշտամբում, հայհոյում էին:

Վախենալով հօրիցը՝ երեխան յօնքերի տակից խոժոռած հայեացք էր ձգում հօր երեսին և լռում, բայց մի անգամ անզգոյշ գտնւեց, չը կարողացաւ համբերել և ասաւ.

— Ո՛չ, հայրիկ, Ստեփանը շատ լաւն է:

Պօրուչիկը սփրթնեց, կապտեց և կատաղաբար ատամները կրճատելով՝ գոռաց.

— Յանդուգն լակնտ, ի՞նչպէս ես համարձակում պատասխան տալու. ես կնշիդ կը քերթեմ:

— Այդ ի՞նչ է նշանակում, — մէջ մտաւ մայրը, — սա ի՞նչ վատ բան է արել. ես ինքս էլ պնդում եմ, որ Ստեփանը լաւն է... Ո՛չ ծոյլ է, ոչ էլ գող:

— Տեսնում եմ որ բոլորդ էլ ինձ հակառակ էք... Դուք ուզում էք ինձ սպանել, — ասաւ պօրուչիկը խուլ ձայնով, և ինչպէս միշտ կնոջ հետ ընդհարում ունեցած դէպքում անում էր, այս անգամ էլ քաշւեց, մտաւ իր սենեակը:

Եւ երկար ժամանակ այնտեղից լսում էր թէ ինչպէս պօրուչիկը արագ անց ու դարձ էր անում: Նա վրդովւած մտածում էր և ծրագիրներ էր կազմում: Յանկարծ նրա երեսին ուրա-

խուժեան պէս բան փայլեց: Նա գտել էր հնարք: Օհ, Վալօդեան անշուշտ այժմ պիտի ասի Ստեփանին...

ժի.

Մի անգամ, երբ տիկինը գնացել էր խանութ հագուստ առնելու, իսկ պօրուչիկը ճաշայրնից նոր էր աչքերն ուռած դարձնել, սեղանատանից ինչ որ ամանեղէնի կոտրելու ձայն բարձրացաւ, հեռն էլ՝ երեխայի լաց:

Պօրուչիկը մտաւ սեղանատունը՝ տեսնելու, թէ ի՞նչ էր: Յատակին թափած էին գաւաթների և բաժակների կոտորուածքներ:

Իսկ սենեակի մէջտեղը կանգնել էր Վալօդեան և լալիս էր: Նա կամեցել էր պահարանի վերին դարակից ինչ որ վերցնել, կանգնել էր աթոռի վրա և ձեռքը ձգել. յանկարծ ոտքը սայթաքում է, ինքը վայր է ընկնում, հետն էլ ցած թափում բաժակներն ու գաւաթները:

Երեխան լալիս էր երկիւղից և զգացած ցաւից:

— Սա... դարձեալ, — բարձր հնչեց հօր ձայնը. — ես քեզ ցոյց կը տամ, թէ ի՞նչ կը նշանակի ամաններ կոտրտելը:

Պօրուչիկը գնաց խօհանոց և չը գտնելով այնտեղ Ստեփանին, դուրս եկաւ հատչն և գոչեց:

— Ստեփան:

Ստեփանը բոստանումը մարդեր էր քաղհանում և հիացած նայում էր լայն փռած վարուէգի թփերին: Նա սպասում էր Վալօդեային. երեխան գնացել էր մկրատ բերելու թփերի ծայրերը խուզելու համար:

Ստեփանը լսեց պօրուչիկի ձայնը և շտապեց տուն: Նա տեսաւ անկիւնում կանգնած Վալօդեային, արտասուքն աչքերից թափում էր. Տրեգուբովը բարկացած երթեկում էր սենեակում:

Ստեփանը առաջ վազեց իր սիրելու մօտ:

— Ի՞նչ պատահեց, չը ցաւեցրիր հօ՛ւ Վիրաւորւած հօ՛ չէս:

Երեխան հեկեկաց և պատասխան չը առաւ:

— Էյ, դու, կարծեմ, քեզ կանչեցի, — գոչեց պօրուչիկը:

— Ի՞նչ էր հրամայում, ձերդ բարեծննդութիւն, — ձգեց Ստեփանը:

— Ճիպտ. ծեծիր էս անպիտանին...

Երեխան ամբողջ մարմնով դողում էր և հեծկտում:

Ստեփանը տեղիցը չը շարժեց: Իէմքիցն երևում էր, որ հաստատապէս վճռել էր պաշտպանել իր սիրեկանին, ինչ էլ որ լինէր:

— Ի՞նչ ես փայտի պէս մնացել կանգնած:

— Ամենևին ո՛չ, ձերդ բարեծննդութիւն:

Պօրուչիկը կանգ առաւ և զարմացած՝ աչքերը չռել էր. նա լսածին չէր հաւատում, այսպիսի մի

դիպւածի մասին նա երբէք չէր մտածել: Նրան թւաց, թէ առաջին կանգնածը ոչ թէ խոնարհ և հնազանդ դենշչիկ Ստեփանն է, այլ մի ուրիշը... Ոչ ձայնն է Ստեփանինը, ոչ նայւածքը:

— Այ թէ ի՞նչ, — ծոր տւաւ պօրուչիկն, — օձի պէս ֆշացնելով, և սկսեց հայհոյանքներ թափել:

— Ես քեզ հրամայում եմ, — գոռաց նա ոտքը գետնին խփելով, — պիտի լսե՞ս, թէ ոչ:

— Ամենևին ոչ, ձերդ բարեծննդութիւն:

— Եթէ դու... այս ըոպէիս... ես քո կաշին կը քերթեմ:

— Ինչպէս ձեր կամքն է, ձերդ բարեծննդութիւն, բայց ես պատիկ աղալին ձեռք չեմ տալ... Ի՞նչպէս կարելի է ծեծել, երեխան ջարդել է, պէտք է խղճալ:

— Գարշելի՛... դու ցնդե՛լես, ի՞նչ է...: Քո մեծաւորի՛, թէ ո՛ւմ հետ ես խօսում, դու կարգապահութիւնը մոռացել ես... Ես քեզ դատաստանի կը յանձնեմ, տաժանակիր աշխատանքի կերթաս... շունչդ չը լինի այստեղ... իսկոյն արգելանոցը:

Ստեփանը նայեց վալօդեայի երեսին, որ աչքը ձգել էր իր վրա, և շրջեց դէպի դուռը:

— Ստեփան, սիրելի Ստեփան, — կանչեց երեսխան և մօտ վազեց նրան:

Հայրը բռնեց որդու ձեռքից և կոպտաբար ետ քաշեց:

— Անկիւն կանգնի՛ր:

Եւ պօրուչիկը, կատաղած անսպասելի անաշողութիւնից, մտաւ իր սենեակը:

Նա առիթ տւաւ որդուն համոզելու, թէ ո՞ր աստիճան սիրում էր իրան Ստեփանը:

Յամենայն դէպս, Տրեգուբովը հասաւ իր նպատակին. իր ատելի դենշչիկ Ստեփանն այլևս իր տանը չի լինի, թէկուզ կինն ինչ կամենայ խօսի: Աւօհնցը խախտել է կարգապահութիւնը, մեծաւորի հրամանը չի կատարել և պիտի պատժւի:

Պօրուչիկը յայտարարութիւն գրեց, թէ ամսի այսքանին դենշչիկ Ստեփան Աւօհնցն իրան անհնազանդ գտնւեց, հրաժարւեց իր հրամանը կատարելուց և յանդգնութիւն գործ դրաւ, ուստի և կարգապահութիւնը պաշտպանելու համար՝ ինքը խնդրում է իշխանութիւնից ենթարկել դենշչիկին դատաստանի:

Պօրուչիկն ինքն իր ձեռքով տարաւ յայտարարութիւնը և տւաւ գնդի ազիւտանտին:

Ժ. Ե.

Կէս ժամ էր անցել յայտարարութիւնը տալուց յետոյ, երբ տիկինը վերադարձաւ տուն, մտաւ հաշտն ու ձայն տւաւ.

— Ստեփան:

Այս անգամ ոչ մի պատասխան չեղաւ:

— Ի՞նչ է նշանակում, ո՞ւր է կորել:

Տիկինը մտաւ բոստանը: Մարգերի մօտ ըն-

կած էին բահն ու փոցիւր: Տիկինը զարմացաւ: Աւօտենցը ոչինչ չէր թողնում ընկած, նա խնամքով պահում էր տիրոջ իրեղէնները: Յանկարծ, ցանկապատի կողմից, հաղարճի թփի տակից լըսւեց երեխայի լացի ձայնը: Հօր անից Վալոդեան ծածկուել էր թփերի մէջ և լալիս էր:

— Ի՞նչ է պատահել, Վալոդեան, ո՞ւր է Ստեփանը:

— Ստեփանը չը կայ, մայրիկ. Ստեփանը չը կամեցաւ ինձ ծեծել և հայրիկը նրան դուրս արաւ:

— Ա՛խ, տէր Աստուած, վաղը լացք ունէինք: Տիկինը վրդովւած, մտաւ մարդու սենեակը: — Յնդէ՛ր ես՝ ի՞նչ է, — գոչեց նա, — իսկոյն Ստեփանն այստեղ լինի:

— Ձի լինի, — մրմուռաց պօրուչիկը:

— Ա՛յդ ինչ ասել է. ուղիղ, որ խելքդ կորցրել ես:

Տիկնոջ համար նորութիւն էր, որ ամուսինն իրան մերժողաբար պատասխանի: Տիկնոջը թւաց, թէ մինչև մարդը խելքը կորցրած չը լինէր, այդ բանը չէր լինի. պօրուչիկն ինքը նոյնպէս փախս էր տալիս կնոջ հայեացքից. նա հեռու քաշւեց, կանգնեց, բայց և այնպէս կրկնեց. — Այդ անկարելի է, ես նրան չեմ կարող վերադարձնել:

— Ի՞նչպէս թէ չես կարող:

— Այդ բո հասկանալու բանը չէ... Կարգա-

պահութիւնն ամեն բանից վեր է... Նա իմ հրամանս չը կատարեց:

— Ասացէք խնդրեմ... Կարգապահութիւն... Ինքդ ես յիմարութիւն արել և կարգապահութիւն ես պահանջում:

Ամուսինը լուռ էր:

— Ես ոչինչ չեմ ուզում իմանալ, լսում ես. ես քեզ պարզ եմ ասում, այս ընդէիս Ստեփանն ինձ հարկաւոր է:

— Ձի կարելի. ես յայտարարութիւն եմ տւել, որ նրան դատաստանի ենթարկեն:

— Իսկոյն շտապիր, քո յիմար յայտարարութիւնդ ետ վերցրու:

— Արդէն, երևի, ազիւտանալը գեկուցել է գնդապետին:

— Քեզ ասում եմ, շտապիր, գնա՛ իսկոյն:

Կնոջ ճիշն ազդեց պօրուչիկի վրա. նա վերցրեց գլխարկն ու գնաց ազիւտանալի մօտ: Փողոցում կնոջ ներշնչած երկիւղն տեղի տւաւ Աւօտենցի դէմ ունեցած ատելութեանը:

— Ի՞նչպէս. որ Աւօտենցը միւս անգամ լինի իմ տանս: Նա ինձ վիրաւորել է. նա որդուս ինձանից յափշտակել է: Ո՛չ, այդ անկարելի է: Նա վճռեց բոլորովին ետ չը վերցնել իր տւած յայտարարութիւնը... — Բայց կնոջս ինչ պատասխան տամ...

Երկու զգացմունք միմեանց դէմ մրցում էին պօրուչիկի մէջ. մի կողմից՝ կնոջ ան ու սար-

սափը, միևս կողմից՝ Աւօհնցի դէմ տածած ատելութիւնը: Այդ վրդովւած դրութեամբ նա եկաւ արհաւիրանալի մօտ: Իր տւած յայտարարութիւնն արդէն գեղուցւած էր գնդապետին և վերջինս մակագրել էր՝ «քննութիւն կատարել»:

Պօրուչիկը շատ գոհ մնաց: Նա խնդրեց արիւտանալին՝ մի ուրիշ դենշչիկ ուղարկելու իրան, և ինքը վերադարձաւ տուն:

— Ես ուզում էի քո կամքը կատարած լինել, — ասաւ նա կնոջը, — բայց արդէն ուշ էր:

— Ոչինչ իմանալ չեմ ուզում, — ճշաց տիկինը:

— Բայց հասկացիր, գնդապետն արդէն իր մակագրութիւնն արել էր:

— Գնահ գնդապետի մօտ և յայտարարութիւնդ ետ ա՛ռ:

— Այդ ի՛նչպէս կարելի է. նա կասի, որ ես յիմարացել եմ:

— Նա առանց այդ էլ գիտի, որ դու յիմար ես:

Պօրուչիկը ոչինչ չը պատասխանեց և միայն կամաց փնթփնթաց.

— Ես գնդապետի մօտ չեմ գնալ:

Նա գնդապետից վախենում էր ոչ պակաս, քան իր կնոջից: Գնդապետին պատահելիս՝ սաստիկ ահ ու դող էր զգում:

— Ուրեմն ես ինքս կերթամ գնդապետի մօտ, — ասաւ կինը:

Տիկինը գլխարկը դրաւ, հայելու մն ուղղեց

բայց յանկարծ թողեց իր մտադրութիւնը:

Նա մտածեց, որ հարկաւոր կը լինի գնդապետին ասել, թէ բանն ինչու մն է: Ամենքը գիտէին, որ պօրուչիկն իր կնոջը կոչում է՝ «հոգիս», իսկ կինը մարդին՝ «իմ սիրելիս»: Եւ յանկարծ նա պիտի գանգատուի մարդուցը, պիտի ասի, որ իր մարդը շատ անգութ է. մի երկու բաժակ ու գաւաթ կոտորելու պատճառով՝ նա կամեցել է երեսային ծեծել...: Այս խայտառակչութիւն է, ուրիշ սպաների կանայք օձի լեզուները կը սրեն ու ձայնը քաղաքովը մին կանեն:

Տիկինը գլխարկը հանեց և երկար ժամանակ բարկութիւնը թափում էր մարդու գլխին, որ Ստեփանի պէս ծառայից իրան զրկեց:

ԺԶ.

Միևս օրը, ողջ առաւօտը՝ տիկինը շարունակ տխուր և վրդովւած էր: Նոր դենշչիկը հեշտաեռ դնել անգամ չը գիտէր: Խեղճը թէպէտ աշխատում էր իր նոր տէրերին հաճոյանալու, բայց ինչ բանի ձեռք էր տալիս, տէրը չէր: Ամանները լւանալիս՝ կոտորում էր, բոստանը քաղհանելիս՝ անպէտք խոտերի հետ գազարն ու բանջարեղէնն էր արմատահան անում, շարտում:

Այդ օրը մարդ ու կին իրար դէմ քնթլած սեղան նստեցին:

— Ո՛ւր է Վալօդեան:

— Զը գիտեմ, ձերդ բարեծննդութիւն, —
ասաւ նոր դենշչիկը:

— Գնա կանչիր. երևի բակումը, կամ բոս-
տանումը կը լինի:

Մի քանի րոպէից դենշչիկը տուն եկաւ և
յայտնեց:

— Նա բոստանումը չէր, ձերդ բարեծնն-
դութիւն:

— Ահա, ուր հասաւ քո գազանութիւնը, —
ձչաց տիկինը մարդու վրա. — երեխան քո ձեռքից
փախել է. դնա պտտտիր և գտիր: Նայիր, մե-
նակ չը վերադառնաս, բակը չեմ թողնի:

— Այդ քո տւած կըթութեան հետեանքն է.
դու բոլորովին բարձի թողի էիր արել երեխա-
յին... Դու ինչ մայր ես... Ո՛չ, այսուհետև ես
ինքս կը հետևեմ որդուս կըթութեանը:

Պօրուչիկը սեղանից վերկացաւ և դենշչի-
կին հրամայեց հեար գնալ:

Տրեգուբովը մտածեց որ Վալօդեան գնա-
ցած կը լինի Ստեփանին պտտտելու, ուստի և
ուղղեց զօրանոցի կողմը:

Նա ամեն տեղ հարց ու լսողիւր եղաւ: Ոչ
որ չէր տեսել երեխային:

Բայց և այնպէս պօրուչիկի ենթադրութիւնը
սխալ չէր:

Երեխան դարդ էր անում իր բարեկամի հա-
մար և գնացել էր որոնելու:

Օ՛հ, ինչպէս էր փափագում Վալօդեան Ստե-

փանին տեսնելու, նրան գրկելու, նրա քաղցը
ձայնը լսելու: Եւ երեխան հաստատապէս վճռեց,
որ Ստեփանը բանտումը կը լինի, և գնաց դէ-
պի դաշտը: Նա բանտի տեղը գիտէր, շատ ան-
գամ էր Ստեփանի հետ բանտի մօտով անց կա-
ցել զբօսանքի գնալիս:

Երեխան բանտի մօտ էր, բայց չը գիտէր՝
ինչ անէր. նա անցաւ պահապանի կողքով բան-
տի միւս երեսը: Պատի ետևում, ներսի կողմի
երկաթէ վանդակապատ լուսամուտների առաջ,
երևում էին դեղնած ու դալկացած կալանա-
ւորներ:

— Ստեփան, Ստեփան, — ձայն էր տալիս Վա-
լօդեան և ականջը սրած լսում էր՝ արդեօք մի
տեղից ձայն չի՞ տայ իր սիրելիին:

Ոչ մի լուսամտից չերևաց Ստեփանի դէմ-
քը: Երեխան դարձեալ մի քանի անգամ ձայն
տւաւ ու սկսեց լալ:

Նա չը գիտէր, թէ ո՞ր կողմը գնար: Տուն
վերադառնալ վախում էր, հայրը կըբարկանար և
կըծեծէր: Ճարը կտրած ուղղեց դէպի բանտից
ոչ հեռու եղած անտառը: Բայց հէնց որ անտա-
ռը մտաւ և լսեց չորս կողմից թփերի չորացած
տերևների խշխշոցը, սարսափահար եղաւ: Ստե-
փանի հետ եղած ժամանակ՝ Վալօդեան գետի
միւս երեսի մեծ անտառիցն էլ չէր վախում,
հիմի չոր տերևները նրան դողացնում էին: Ե-
րեխային թւում էր, թէ հիմա ուր որ է թփե-

րի տակից դուրս կը պրծնի կարմիր շապիկը հագին, սուր դանակը ձեռին աւազակը, կամ խոտերի տակից գլուխը կը բարձրացնի օձն ու իրան կը խայթի: Եւ Վալօդեան չը գնաց մեծ անտառը, նա նստեց անտառի փիխ:

Սակայն և այնպէս, պօրուչիկն ու իր դենշիկը մեր փախստականի հետքը բռնեցին. մի կին տեսել էր երեխային բանտի փողոցովն անցնելիս, բանտապետն էլ ասաւ, որ երեխան գրնաց դաշտի կողմը:

Յանկարծ Վալօդեան հօրը տեսաւ:

Նա տեղիցը վեր թռաւ և իրան ձգեց անտառը, ուր առաջ մտնել վախենում էր: Նա այլ ևս երկիւղ չէր անում ոչ աւազակից, ոչ օձերից և ոչ թփերի խշխշոցից: Նա ուղղակի ներս խցկեց թփերի մէջ: Բարակ ճղնիկները ձգձղում էին երեխայի երեսը, փշերը ծակծկում էին, բայց հօր ահ ու սարսափից երեխան ուշք չէր դարձնում: Նա մտածում էր՝ մի տեսակ թագնւի անտառի խորքումը, որ իրան չը գտնեն: Չուր: Հայրը նկատել էր Վալօդեային՝ խոր անտառը փախչելիս:

Եւ, ահա, երեխան լսեց ետևից ծառերի և թփերի ճղների կոտրատելու ձայներ և իր քամակից վազող կոպիտ քարեր: Մէկն ուղղակի մօտենում էր իրան: Երեխան թփի տակին կուշ եկաւ և ահից մնաց անսաս կանգնած: Օհ, մէկը պինդ սեղմեց նրա բազուկն և խիստ ցաւացրեց.

տերևների խշխշոցի միջից բարձրացաւ մի սոսկալի գոռոց.

— Այ օրտեղ ես, անպիտան... Փախչել հա... ես քեզ ցոյց կը տամ... է՛յ, դո՛ւ, դենշիկ, ճիպտաներ կտրտիր.

— Հրամանք ես, ձերդ բարեծննդութիւն:

Ահա մի կոպիտ ձեռք բռնեց երեխային: Խեղճը յուսահատ ճիչ արձակեց և թակարդ ընկած գազանի պէս՝ թափէ թափ էր գալիս:

— Ես քեզ ցոյց կը տամ, թէ ծնողներից փախչելն ի՞նչ կը նշանակի:

Հէնց առաջին հարւածից երեխան ձայնը կտրեց: Նա ամբողջ մարմնով ցնցեց և փայտացաւ:

— Ներիք է, — գոչեց վախեցած պօրուչիկը:

Մի քանի բոպէից Վալօդեան ուշքի եկաւ:

— Բռնիր, տա՛ր, — հրամայեց պօրուչիկը դենշիկին, — բայց նայիր, որ ձեռքից չը թողնես:

Երեխան չը հակառակեց, երբ դենշիկը նրա ձեռքը բռնեց. Վալօդեան մի տեսակ լլկեց ու մնաց. լալն անգամ թողեց: Այս դէպքից յետոյ՝ կարծես, նրա համար միևնոյն էր. ինչ ուզում են, թող անեն:

Երեկոյին երեխան սաստիկ տաքութեան մէջ ընկաւ. նա անդադար անկողնում դէս ու դէն էր դիպչում և զառանցում էր ու Ստեփանին օգնութեան էր կանչում: Մայրը հրաւիրեց դինւորական բժշկին: Վերջինս քննեց հիւանդին

և պլուսը շարժեց:

— Ի՞նչ է ցաւը, բժիշկ, — հարցրեց մայրը:

— Ծեծից անաշացած Չղային ցնցու մն:

— Ի՞նչպէս թէ ծեծից անաշացած:

— Երեխային ծեծել են և այն էլ շատ սաւա-
տիկ:

Պօրուչիկը ծեծի մասին կնոջը ոչինչ չէր
տեսել:

— Ի՞նչ երեխային ծեծել էս, — յարձակեց

կինը մարդու վրա՝ բժիշկի գնալուց յետոյ:

— Իհարկէ, անհրաժեշտ էր:

— Անգնւթ... մարդասպան... երեխաս մեռ-
նում է...

— Անհանգիստ մի լինի, չի մեռնի: Ես դը-
րան բարիք եմ արել: Իմ արած բարիքը դա ամ-
բողջ կեանքումը չի մոռանայ:

Պօրուչիկը չը սխալեց: Մի քանի օրից՝
Վալօդեան առողջացաւ, բայց նրա զգացմունքը
դէպի հայրը միանգամայն փոփոխութեան են-
թարկեց: Առաջ նա վախենում էր հօրիցը և
չէր սիրում, իսկ այժմ մանկական սրտի մէջ
ատելութիւն աճեց: Վալօդեան կտրականապէս
վճռեց՝ այսուհետև հօրը ոչ բարևել և ոչ ձեռքը
համբուրել: Պօրուչիկը սպառնաց ծեծով, իսկ
մայրը որդուն պաշտպան հանդիսացաւ:

— Եթէ այսուհետև, թէկուզ մի անգամ ևս՝
այդ բանը կանես, ես քեզանից կը հեռանամ, —
պտաւ կինը:

Մօր սպառնալիքը երեխային ծեծից ազա-
տեց:

Թի.

Երբ Աւօհնցն արգելանոց մտաւ և դուռը
վրան փակեց, նա ընկաւ կատարեալ յուսանա-
տութեան մէջ: Չը նայած որ սիրտը շարունակ
անհանգիստ կերպով բաբախում էր և բազմա-
տանջ մտմտուկները յուզում էին ուղեղը, բայց
նա իր ամբողջ էութիւնով զգաց, որ կեանքն
այսուհետև իր համար վերջացած է: Սպագան
աւելի մութն էր թւում Աւօհնցին, քան բնութի
դռան ճեղքերից ներս թափանցած աղօտ լոյսի
նշոյլը: Երբ նա սկսում էր ապագայի վրա մը-
տածել, անցեալն ամենալուսաւոր փայլով նկա-
րւում էր նրա աչքի առաջ:

Նա տեսնում էր խոհանոցը, ուր ինքնա-
զլուխ զործում էր, մտաբերում էր իր փափուկ
անկողինը, իրեն թւում էր, թէ դեռ լսում է
խոհանոցի դռան ձուռոցը և ժպիտան երեսին շտա-
պով ներս վազող խարտեաշ երեխայի քաղցրա-
հնչիւն ձայնը, որը իր ներկայութեամբ մի տե-
սակ պայծառ լոյս և կենդանութիւն էր բերում:
Դալիս էր Վալօդեան Ստեփանի մօտ թռչկոտա-
լով, խօսում, զրոյց էր անում նրա հետ, տեղե-
կանում էր թէ ինչ է պտորաստում ճաշին,
էրբ պիտի զբօսնելու գնան և այլն և այլն:

Մտաբերում էր Աւօհնցը, թէ ինչպէս եր-

բեմն երբեմն երեխան տուն էր ընկնում իր մօտ
խոհանոց և ձեռքում մի բան բռնած, ասում.

— Գեղ համար բան եմ բերել, բայց դու
չես կարող իմանալ, թէ ի՞նչ է. աչքերդ փակիր,
բերանդ բաց:

Այ բախտ. ժպտալով հնազանդում էր Ստեփանը,
իսկ Վալօդեան կշկշալով, խնդալով՝ ա-
նուշեղէնը դնում էր նրա բերանը:

Այժմ Ստեփանի երջանկութիւնն իսպառ-
անհետացաւ:

Խոր հառաչանքներն ներքոյ՝ Աւօենց Ստեփանի
միտքը թռչում սլանում էր հեռու, հեռու:

Յիշեց նմանապէս Աւօենցը ազառակը, որ-
տեղ նա մինչև իր ապաբախտութեան առաջին
ըրպէն գործում էր: Ծաղկել փթթել էին պոլո-
ճիկն ու սիսեռը: Խաշխաշի ալւան ծաղիկները
քամու հետ խաղս էին լինում, վարունգը մօտ
էր ծաղկելուն, սեխի ու ձմերուկի թաղերն սկը-
սել էին փուխել: Ծարունակ մտածում էր Աւօեն-
ցը, թէ այս տարի Վալօդեան փշփշոտուն, ծա-
ղիկը ծայրին վարունգի ծնուկներ կուտի, համեղ
սեխ ու ձմերուկներ կունենայ...

Յանկարծ՝ մի բարկացած ձայն լսեց.

— Ստեփան:

Չըզգալով՝ թէ ի՞նչ փորձանք է գալու իր
գլխին, Ստեփանը դուրս վազեց ազարակից:

— Տիրոջս հրամանները կը կատարեմ ու
Վալօդեայի հետ կրկին կըգամ բոստան, — մտա-

ծեց Ստեփանը:

Յիշում էր Աւօենցը երեխայի տխուր դէմ-
քը, երբ նա անկիւնում կանգնած լալիս էր և
աղաղակեց.

— Ստեփան, իմ սիրելի Ստեփան:

— Ասումս իմ, մի՞թէ ես նրան այսուհետև
երբէք տեսնելու չեմ:

Եւ Աւօենցն ինքն իրան պատասխանեց.

— Բալովին ոչ: Մի՞թէ նրանք Վալօդեային
ինձ մօտ կը թողնեն: Նա վաղուց եկած կըլի-
նէր ինձ տեսնելու, բայց չէին թոյլ տայ:

Այնպէս յուզեց այս մտածումները ից Ա-
ւօենցը, որ աչքերն արտասուքով լցեցին:

Այնուհետև նա սկսեց մտածել, թէ իրան
ինչ պատիժ կըհասնի մեծաւորի հրամանը չըկա-
տարելու համար, Բանտի մթութեան մէջ նրան
ներկայանում էր Սիբիրն իր սառցապատ լեռ-
ներով, ծանր շղթաներ, գետնափորերում տա-
ժանակիր աշխատանք և այլն:

— Գուցէ ուրիշներին օրինակ տալու համար
գնդակահար էլ անեն... Ի՞նչ կայ... մահն էսօր կամ
էգուց... միլինոյն է, — մտածում էր Ստեփանը:

Յուսահատութիւնը համակել էր Աւօենցի
սիրտը:

ՓԸ.

Աւօենցի գործը սովորական կարգով ընթա-

նում էր: Պարուհիկ Տրեգուբովի յայտարարութեան համաձայն քննութիւնն առանց շտապեցնելու շարունակում էր:

Աւօնցի արարքը բոլորովին այն բնաւորութիւնը չէր կրում, ինչպէս պօրուհիկի յայտարարութեան մէջ նրան վերագրւած էր: Փոխանակ «իր մեծաւորին վիրաւորանք հասցնող և նրա հրամանը կատարելը մերժող յանդուզն զինւորի», մէջտեղն երևում էր մի բարի, սրտացաւ մարդ, որը չէր կարողացել կատարել մի անգութ հօրն հրամանը և չէր ծեծել իր սիրելուն. փոխանակ յանդուզութեան, որով, իբր թէ, վիրաւորել էր սպայական պատիւը, մէջտեղ երևաց «ամենևին ոչ, ձերդ բարեճննդութիւն» խօսքերը:

Չղային գրգռմունքը, տխրութիւնը, արգելանոցում երկար մնալը սարսափելի կերպով ներգործել էին Աւօնցի կազմածքի վրա. աւելացրէք դրան և պօրուհիկի կնոջ համար անընդհատ կատարած մաշիչ աշխատութիւնները:

Գարնանից արդէն Աւօնցը սկսել էր հազալ: Չարաղէտ դէպքից յետոյ՝ հիւանդութիւնը սարսափելի կերպով գազանի պէս ճանկերի մէջն էր առել թշուառ որսին: Բժիշկը գտաւ, որ թորերի կէսը փչացած է նրան հիւանդանոց տեղափոխեցին:

Տեղափոխութիւնը մեծ հանգիստ պատճառեց հիւանդին. այլևս նա խոնաւ գետնին չէր պառկում, անկողինը, թէև բաւականին կոշտ,

բայց սառը գետնի հետ համեմատած՝ Աւօնցին թւում էր շատ յարմար և փափուկ:

Մահճակալի դիմացը մի մեծ լուսամուտ կար, որտեղից Աւօնցը տեսնում էր արևի ծագումն ու մայր մտնելը, կապոյտ երկնակամարում լողացող ամպերը: Մէկ մէկ՝ ծիծեռնակները թռչկոտում էին լուսամտի առաջից և պատուհանի վանդակապատի վրա նստում գլգլում էին աղաւթները:

Նայում էր Աւօնցը երկնքին, ամպերին և նրա տեսողութեան առաջ պատկերանում էին իր հայրենի գիւղը, բղխող աղբիւրակները, իրանց այգիներն ու ագարակները և Արագածի զովարար մեղմ զեփիւռը:

— Հիմի այնտեղ սկսել են բոլոր պտուղները հասնել, — մտածում էր Աւօնց Ստեփանը:

Սաստիկ ցանկանում էր իմանալ Ստեփանը, թէ արդեօք գո՞չ էր Վալօգեան իր ցանած ու տընկած արմտիքներից և կանաչեղէնից, արդեօք խոշոր ու քմիցք են ձմերուկներն ու սեխերը:

Շատ անգամ նա մտածում էր՝ արդեօք յիշում է իրան Վալօգեան. խեղճ հիւանդի սիրար յաճախ արոփում էր իր սիրելուն տեսնելու անիրագործելի և ջերմ փափագով և չէր հանգստանում:

— Անկարելի բան է, — հառաչում և խոր թառաչում էր Աւօնցը: Իսկ այդ անկարելին, այդ անիրագործելի ցանկութիւնը օր ըստ օր է աճում

էր Աւօհնցի մէջ և կլանում նրա ուղք ու մտքը:

Այս մտամտուկներով՝ օրերն անցնում էին, ուժասպառ մաշելով խեղճ Աւօհնցին:

Նա անտրտունջ պառկած էր ու չէր զգում իր գլխին գալիք վտանգը:

Այցելութեան ժամերին՝ բժիշկը հարցնում էր Աւօհնցից.

— Զ՛ը, ի՞նչպէս ես:

— Փնօք Աստծու, ոչինչ, ձերդ բարեծննդութիւն, միայն գիշերը ծանր էի:

Իսկ գիշերներն նրան տանջում էր անքնութիւնը և մաշում ջերմն ու տենդը. երբեմն տաքութիւնը բարձրանում էր այն աստիճանին, որ հիւանդն ուղղակի զառանցում էր:

Այդ միջոցում՝ նրան թւում էր, թէ ինքը, ըստ առաջնոյն, դենշիկ է... Վալօդեայի հետ փոռան է թողում. բայց չէր հասկանում, թէ փոռանն ինչի՞ չէր խշխշում, և որքան ինքն աշխատում էր չէր կարողանում ձայն հանել տալ:

Առաւօտադէմ, երբ ջերմը փոքր ինչ մեղմանում էր, Աւօհնցը կարճ քնի մէջ էր մտնում, իսկ երբ զարթնում միշտ այն էր մտածում, թէ ի՞նչպէս անի, որ Վալօդեային կարողանայ տեսնել:

Կէս քուն, կէս արթուն, թմրեցուցիչ դեղի ազդեցութեան ներքոյ Աւօհնցն երբեմն ժամերով անթարթ աչքերով դռանն էր նայում: Նա երևակայում էր, թէ անհ, անհ դուռը կը բացուի, Վալօդեան ներս կը մտնի և կասի.

— Ստեփան, ես եկել եմ քեզ այցելելու:

Մի անգամ, երբ ոչ քնած էր և ոչ արթուն, պատահաբար նա լսեց մի սոսկալի նորութիւն:

Հիւանդանոցի ծառան և Ֆելդշերը՝ կարծելով՝ թէ Աւօհնցը քնած է, սկօեցին իրար հետ ազատ խօսք ու զրոյց անել: Իրան խօսածքից Աւօհնցն իմացաւ, որ ինքը շուտով մեռնելու է: Սկզբումը նա զարմացաւ և հաւատ չընծայեց նրանց խօսքերին, բայց, յանկարծ՝ նրա վրա մի թանձր տխրութիւն եկաւ և շփոթութեան մէջ ընկաւ:

— Էլ չեմ տեսնի իմ աշխարհս, ծնողներիս, եղբայրներիս, քոյրերիս, ազգ ու ընտանիքիս, նրանք հեռու, շատ հեռու են. էստեղ, էս օտարութեան մէջ մի Վալօդեա ունէի և հիմա նրան էլ չը պիտի տեսնեմ, — շնջում էր հիւանդը, շրթթունքները զողացնելով... — Ի՞նչ, էտ անկարելի է...

Եւ Աւօհնցը մտքումը դրաւ փախչել հիւանդանոցից:

— Արդեօք կարող եմ, — լրջօրէն մտաւայ Աւօհնցը, — արդեօք փախչելու ուժ կունենամ:

Նա փորձեց անկողնից վեր կենալու, բայց հազիւ կարողացաւ տեղիցը կանգնել և նստել:

Ուժահատ, յուսահատ, աչքերն արտասուքով լցրած՝ ընկաւ նա բարձի վրա:

Մի քանի ըոպէից յետոյ մի ուրիշ մտածմունք նրան ամբողջովին պաշարեց:

Լուսադէմից՝ հիւանդն աչքը դռնից չէր հե-

ուսման և անդադար հարցնում էր հիւանդանոցի ծառային։

— Բժիշկը շուտով կը գայ։

— Աւօճապէս քօրքօր ուժը ասաւ։

— Զերդ բարեծննդութիւն, ողորմեցէք ինձ։

— Ի՞նչ կայ, ասա, — քաղցրութեամբ պատասխանեց բժիշկը։

— Երևում է, ձերդ բարեծննդութիւն, որ ես պիտի մեռնեմ... ուզում եմ խնդրել, որ ճնար անէք ինձ նրան տեսնելու։

— Ի՞նչ անես ինչու։

— Ինչ երեխային... Վարդեային... եթէ, ձերդ բարեծննդութիւն, դուք նրան ասէիք՝ Ստեփանը մեռնում է, կարելի է, նա կը գար ինձ տեսնելու։

Այս խօսքերը հիւանդին իսպառ շփոթեցրին. նա դառնապէս լալիս էր։

Բժիշկն ըմբռնեց հիւանդի ցանկութիւնը, նա գիտէր Աւօճապի գլխով անցած բոլոր դիպածները։

— Լաւ, ասա բժիշկը, ճանգաստացիր, ես նրան կը բերեմ։

— Խնդրեցէք, ձերդ բարեծննդութիւն տրեւոյ՞ թոյլ տալու... շատ եմ կարօտում...

— Քեզ խօսք եմ տալիս, որ նրան կը բերեմ, կը կրկնեց բժիշկը։

Աւօճապի կիսամար աչքերում փայլեց անսահման շնորհակալութեան արտայայտութիւն։

հիւանդանոցի բժիշկն ուղիղ գնաց Տրեզուրոյի մօտ։ Նա գիտէր, որ ետ թողնել չէր կարելի, նրա կարծիքով այսօր չէ՛ վաղը Աւօճապը մեռնելու էր։

ԺԹ.

Ջերմը սաստկացել է, Աւօճապը թմրած ընկած է անկողնում։ Նրան թուում է, թէ պօրու-

չիկի խոհանոցում կողիկներ է պատրաստում։

Նրա աչքը դռան կողմն է, արդեօք երբ պիտի ներս գայ իր սիրելի և թանգագին երեխան։ Այսօր խնձորով կարկանդակ էլ պիտի շինւի... ինքը մի կարմիր խնձոր է վերցրել Վարդեայի համար։

Յանկարծ՝ դռան բաղխում լսեց նա աչքերը բացեց և չը կարողացաւ հասկանալ, երազը մէջն է, թէ զարթնել է։

Մինչև ներկայ ընկնել նա շատ թոյլ էր, իսկ այժմ՝ թուլութեան փոխարէն՝ նրա մէջ մի տեսակ յուզմունք առաջացաւ, մի տեսակ կենդանութիւն խաղաց նրա երակների մէջ։

Դուռը ետ բացեց և Աւօճապը տեսաւ Վարդեային ու բժիշկին։ Հիւանդը մտաբերեց բժիշկի խոստումը և համոզւեց, որ տեսածն երազ չէր։

Երեխան վախվախելով՝ աչքերը դարձրեց շորս կողմի մահճակալներին, մոխրագոյն վերջ մահների տակից դալկացած և մաշած դէմքեր իրան էին նայում։

Բժիշկը տարաւ Վալօղեային Աւօյենցի մահ-
ճի մօտ:

Վալօղեան նկատեց Ստեփանի նիհար ու
մաշուած պատկերն և լաց եղաւ:

— Ստեփան, իմ սիրելի Ստեփան, — գոչեց
մանուկն արտասուելով:

Աւօենցն ուրախութիւնից այնպէս յուզել
էր, որոշ մի խօսք չը կարաց արտասանել. հա-
յիլ-մայիլ ուշք ու միտքն ամփոփել էր նա երե-
խայի երեսին: Երջանիկ ժպիտը խաղում էր նրա
աչքերում, կարճատև կեանքի վերջին ճառա-
գայթնները փայլում էին հիւանդի սրած քթի
վրա:

— Եկար... չը մոռացար... — շնջաց ի վեր-
ջոյ հիւանդը:

Ոչ շշուշ էր այն և ոչ խրխռոց:

Վալօղեան նայում էր նրան և լալիս, ցա-
ւակցութիւնը համակել էր մանկական սիրտը:

— Ես սիրում եմ քեզ, Ստեփան, — հեկեկաց
երեխան, — առանց քեզ ես շատ ախուր եմ... մեր
հիմիկայ դենշիկը վասն է... Չը գիտեմ իմա-
նում ես, թէ ոչ, ախար ես տանից փախայ...
գնացել էի քեզ պտոսելու... Գնացի բանտը,
կարծում էի, թէ դու էնտեղ կը լինես:

Աւօենցը, մի տեսակ թմրութեան և ինքնա-
մոռացութեան մէջ ընկած, լսում էր Վալօղեայի
խօսքերը, և նրան թուում էր, թէ ինքը ջրում
խեղդուում էր, այդ խեղդելն իրան շատ հա-

ճոյ էր թւում... Կապտագոյն մշուշը բռնել էր
նրա աչքերը... Նա մի մեղմ երգի ձայն էր լսում,
բայց հասկանալ չէր կարողանում. գիտակցու-
թիւնը նրան թողնում էր, բայց յանկարծ ածու-
խի նման առկայծեց:

— Իսկ սեխերը... — հարցրեց հիւանդը:

— Մեծացել են, վարունգը հասել է. էգուց
ես քեզ համար կը բերեմ. ես այսուհետև ամեն
օր կը գամ քեզ մօտ:

Աւօենցը ժպտաց. նրա բերանը խօսքեր
չէին գալիս, որոնցով կարողանար արտայայտել
այն երջանկութիւնը, ինչ որ զգաց ինքը Վալօ-
ղեայի ասածներին:

Հիւանդը լուռ էր և աչքերը բաց ու խուփ
անելով՝ ականջ էր դնում իր համար ամենասի-
րելի ձայնին:

— Է՛, Վալօղեան, տուն գնալու ժամանակն է, —
կամաց ասաւ բժիշկը:

Աւօենցը տեղումը շարժեց, կարծես ու-
զում էր՝ բռնել և չը թողնել երեխային, բայց
նա շնջաց, «Գնում ես... Վալօղեան... մէկ համ-
բուրիք ինձ»:

Երեխան լացակրկնած՝ գգլեց Ստեփանին և
համբուրեց նրա շրթունքն ու այտերը:

Քաղցր ինքնամոռացութեան մէջ Աւօենցը
փակեց աչքերը:

— Ես վաղը կը գամ քեզ մօտ, — հասաւ հի-
ւանդի ականջին Վալօղեայի ձայնը:

Ինչոր ճոռաց: Աւօտնցն ամբողջ մտքնով
ցնցւեց և աչքերը բացեց:

Աննահազար չէին ոչ բժիշկն և ոչ երեխան:
— Էգուց կը գայ, — մտածում էր Ստեփանը,
— նա ինձ սիրում է... բժիշկը բարի էր... չը
խաբեց... Վաղը շնորհակալութիւն կը յայտնեմ...

Աւօտնցը չը կարաց իր ցանկութիւնը կա-
տարել:

Նա քուն մտաւ ու վաղ այլևս չը գարթնեց:

LENIN adena
Центр. Библиотека
№ 3344
ИМ. ЛЕНИНА
Marqazi qutubxana

ԳԵՂԱՅԱՆ
ԳԵՂԱՅԱՆ
ՀՄԽՀ-ՍՍՐԱ
ИМ. А. МЯСНИАН
ԳԵՂԱՅԱՆ

ՆՄԷԷ

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

3344

LIBRARY OF THE
MUSEUM OF NATURAL HISTORY
LONDON

« Ազգային գրադարան



NL0317757

3406

